№ 78 ՉՈՐԵՔՇԱԲԹԻ 10 ԱՊՐԻԼԻ

1913
ՔԱՌԱՍՈՒՆԵՐԿՈՒԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՉՈՐԵՔՇԱԲԹԻ 10 ԱՊՐԻԼԻ № 78

Տարեկան գինը 10 րուբլի. կէս տարվանը և 7 ամսվանը 6 րուբլի.
Առանձին համարները ԱՄԵՆ ՏԵՂ 5 ԿՈՊ.

Թիֆլիսում գրվում են խմբագրատանը.

Մեր հասցէն՝ Тифлисъ, редакція «Мшакъ»
Сергіевская ул. № 5.
Tiflis, Rédaction „Mschak"

Խմբագրատան տելեֆոն № 2—53.

ՄՇԱԿ

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2
(բացի կիրակի և տօն օրերից)

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզվով

Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր տողատեղին 10—20 կոպ.

Տպարանի տելեֆոն № 67.

ՄՇԱԿ

Հասցէն՝ ТИФЛИСЪ, Редакція „МШАКЪ".
TIFLIS, Rédaction du journal „MSCHAK".

ԱՊՐԻԼԻ 1-ԻՑ ՄԻՆՉԵՒ ՏԱՐՎԱՑ ՎԵՐՋԸ 8 ՌՈՒԲ.

Բաժանորդագրվել կարելի է իւրաքանչիւր ամսի 1-ից սկսած:

Հասցէն փոխելու համար պէտք է ուղարկել նաև հին հասցէն և 40 կ. նամականիշ. ՀԻՆ ՀԱՍՑԷՆ և 40 կ. չուղարկողների խնդիրները՝ հասցէն փոխելու վերաբերմամբ ԿԸ ԹՈՂՆՎԵՆ ԱՆՀԵՏԵՒԱՆՔ.

Յայտարարութիւնների համար պէտք վճարել I երեսի վրա իւրաքանչիւր տողատեղին (պետիտ)—20 կ., IV երեսի վրա—10 կոպ.։

Կովկասից դուրս գտնվող անձերի և հիմնարկութիւնների յայտարարութիւնները բացառապէս ընդունվում են՝ Մոսկվայում—Центральная Контора Объявленій Торг. Дома Л. и Э. Метцль и Ко, և նրա բաժանմունքներում.—Պետերբուրգում՝ Морская, 11, Վարշավայում՝ Маршальковская, 130, Վիլնոյում՝ Большая, 38, Պարիզում՝ 8 Площадь Биржи.

1913 թւի տարեկան բաժանորդները, որոնք առ 1-ն յունվարի 1914 թ. լրիւ վճարած կլինեն բաժանորդավճար 10 րուբլին, ձրիաբար կը ստանան հետևեալ 2 գրքերը. 1) «Մշակ» և հայ կինը» 2) «Մշակի» քառասնամեակ»։

ԱՊԱՌԻԿ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ ԿԱՄ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ ՉԷ ԸՆԴՈՒՆՎՈՒՄ

ՄԱՐԻԱՄ ՅԱՐՈՒԹԻՒՆԵԱՆ ԱՐՋՈՒԽԱՆԵԱՆՑԸ խորին վշտով յայտնում է իր ազգականներին և ծանօթներին իր թանգագին ամուսնու՝

ԱԼԷՔՍԱՆԴՐ (ՍԱՆԴՐՕ) ԹՈՎՄԱՍԵԱՆ

ԱՐՋՈՒԽԱՆԵԱՆՑԻ

անժամանակ մահը, որ տեղի ունեցաւ ամսիս 8-ին։ Մարմնի յուղարկաւորութիւնը վաղը, հինգշաբթի, ապրիլի 11-ին, իր սեփական տնից (Օքրոյեան փողոց № 4) դէպի Մէյդանի ս. Գէորգ եկեղեցին։ Թաղումը Խոջիվանքի գերեզմանատանը։

277. 1—1

ԹԻՖԼԻՍԻ ՎԱՃԱՌԱԿԱՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ՀԻՄՆԱԴԻՐՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊԻՉ ԿՈՄԻՏԷՏԸ

յայտնում է ի տեղեկութիւն պ. պ. բաժնետէրերի, որ Կիրակի, ապրիլի 21-ին ս. թ., առաւօտեան ժամը 11-ին ԹԻՖԼԻՍԻ ՎԱՃԱՌԱԿԱՆԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ՇԻՆՈՒԹԵԱՆ ՄԷՋ (Բէբուտովսկայա փ. № 50) տեղի կունենայ պ. պ. ԲԱԺՆԵՏԷՐԵՐԻ

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎ

ԶԲԱՂՄՈՒՆՔԻ ԱՌԱՐԿԱՆԵՐՆ ԵՆ.

1) Կազմակերպիչ Կոմիտէտի զեկուցումը Բանկի հիմնադրութեան վերաբերմամբ ունեցած իր գործունէութեան մասին։
2) Կազմակերպիչ Կոմիտէտի հաղորդագրութիւնը Բանկի պահեստի դրամագլխի $50^{0}/_{0}$-ի գրութեան և գործը կազմակերպելու վերաբերեալ եղած ծախքերի մասին։
3) Ընտրութիւն Խորհրդի 8 անդամի։
4) Ընտրութիւն Վարչութեան 3 անդամի։
5) Ընտրութիւն Վերստուգիչ Յանձնաժողովի 5 անդամի։

ԾԱՆՕԹ.—1) Ընդհանուր ժողովին ձայնի իրաւունք ունի միայն այն բաժնետէրը, որը ունի 25 ակցիայից ոչ պակաս։

2) Համաձայն Կանոնադրութեան § 59-ի, ձայնատւութեան համար տրված հաւատարմագրերը պէտք է ներկայացվեն Կազմակերպիչ Կոմիտէտին երեք օր առաջ նախ քան ընդհանուր ժողովը։

Նրանք, որոնք ցանկանում են մինչև այդ ժամանակը իրանց ձեռք բերած ակցիաների իրաւունքը տալ ուրիշ անձերի, պարտաւոր են իրանց ստացած ժամանակաւոր վկայագրերը ներկայացնել Կազմակերպիչ Կոմիտէտին՝ այդ մասին գրքերում արձանագրելու համար։

(կ.) առ. 278. 2—1

Կ. Հ. Բ. Ը. Խորհուրդը յայտնելով, որ առաջիկայ **Զատկի տօների առիթով** շնորհակալութեամբ ընդունում է ԱՂՔԱՏՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՆՈՒԷՐՆԵՐ դրամով, մթերքներով և շորով ամենայն օր՝ առաւօտեան ժամը 9-ից մինչև 2-ը և երեկոյեան ժամը 5-ից մինչև 7-ը Ընկերութեան գրասենեակում (Абасъ-Абадская площадь № 7, с. д.), խոնարհաբար խնդրում է բարեսիրտ ունևորներին օգնութեան հասնել թշուառներին։ Ընդունվում են նաև նուիրատւութիւններ զատկական փոխայցելութիւնների փոխարէն։

առ. 276. 2—1

ԱՊՐԻԼԻ 7-ԻՑ ԲԱՑՎԱԾ Է ԴԵՂԱՅԻՆ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ԱՌԵՒՏՐՈՎ ՊԱՐԱՊՈՂ ԸՆԿԵՐԱԿՑՈՒԹԵԱՆ ԽԱՆՈՒԹԸ

„ՍՕԼՕՏԱՏ"

Ֆիրմայով, Սոլոլակսկայա փողոցի վրա Թիֆլիսի Փոխադ. Վարկի Ընկ. նոր շինութեան մէջ։

ՔՍԱՆՀԻՆԳԱՄԵԱՑ իմ գործունէութիւնը Դեղատնային Ապրանքների Առևտրի Կովկասեան Ընկ. Երևանեան հրապար. վրա գտնվող խանութի տնօրէնի պաշտօնում, գործին հմուտ լինելը, նոյնպէս և ներկայ նորաբաց խանութում յայտնի ֆիրմաների բարձր յատկութեան թարմ ապրանքներ ունենալը իրաւունք են տալիս ինձ յուսալու, որ Թիֆլիսի հասարակութիւնը ուշադրութեան կառնի խանութը ու միևնոյն ժամանակ կատարելապէս կը համոզվի ապրանքները բարեխղճօրէն վաճառելու մէջ։

առ. 274. 10—2 (ա. օ.) ԱՐՏԵՄ Բ. ՕՎՉԵԱՆՑ

ԲԵՌԼԻՆԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ
ԲԺՇԿԱՊԵՏ
Գ. Գ. ՄԵՀՐԱԲԵԱՆՑ

ներքին հիւանդութիւններ՝ առանձնապէս կրծքի, ԹՈՔԱԽՏԻ և սրտի։ Բժշկութիւն նաև ՏՈՒԲԵՐԿՈՒԼԻՆՆԵՐՈՎ, ՌԱԴԻՈ պրեպարատներով և վիրաբուժական միջոցով՝ ՊՆԵՎՄՕԹՕՐԱՔՍՈՎ։
Ընդունելութիւնը ամեն օր, առաւօտեան ժամը 9—1-ը և երեկոյեան ժամը 5—8-ը։
Չքաւորներին առ. ժամը 9—10-ը ձրիաբար։
Սոլոլակ, Բէհբութեան փող. № 23 (անկիւն Գանովսկայա)։ Հեռախօս 7—92.
(ա. օ.) առ. 92. 100—48

ՎԵՐՋԻՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

(Պետերբուրգի Հեռ. Գործ.)

8 ապրիլի

Կ. Պոլիս.—Զինուորական դատարանը որոշեց կալանաւորել պրինց Սաբահէդդինին նրա համար, որ նա հրաժարվեց վկայ լինել կառավարութեան դէմ կազմված դաւադրութեան գործում։ Դաւադրութիւնը կազմակերպել էր Սաբահ-էդդինի քարտուղար Սավֆէտ-Լիւթֆին։

Լոնդոն.—Ռէյտերի տեղեկութիւնների համաձայն, Յունաստանը տեղեկացրել է մեծ պետութիւններին, թէ պատրաստ է չէզոքացնել ծովափը սկսած Կորֆու քաղաքի դիմաց գտնվող կէտից մինչև Գրամուլա ծոցը և պլեբիսցիտ կատարել գրաւված երկրում մեծ պետութիւնների պատուիրակների հսկողութեամբ։ Յունաստանը յոյս ունի, որ մեծ պետութիւնները կը խորհրդակցեն դաշնակիցների հետ Ալբանիայի հարաւային սահմանների և Եգէյեան կղզիների հարցի առիթով։

—

Լոնդոն.—Կայացաւ դեսպանաժողովի նիստը։ Գրէյի բացակայութեան պատճառով նախագահեց Ասկվիտը. Ներկայ էր լորդ Մօրլէյը։

—

Հռոմ.—Ադանայի շրջակայքում սպանվել է մի իտալացի։ «Էտրուրիա» յածանաւին հրամայվեց գնալ դէպի Մերսին, ուր նա կը հասնէ վաղը։

—

Սալոնիկ.—Եկան յունաց զօրքի երկրորդ զօրաբանակի մնացած մասերը։

—

Բէյտէն.—Վերին Սիլեզիայի հանքային շրջանում գործադուլների թիւը մօտ 25,000 է։

ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԸ

ԼՈՒՐԵՐ ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԻ ՄԱՍԻՆ

—

«Nea Patris» յոյն թերթը հաղորդում է, որ Թիւրքիայի վակուֆների մինիստրութիւնը առաջարկել է Նեշտէրճեան և Մոստիճեան էֆէնդիներին գնալ Հայաստան՝ հողային խնդիրները կարգադրելու նպատակով։ Վերոյիշեալ անձինք մերժել են մինիստրութեան այս առաջարկը։

—

Սուրաբայա, 5/18 մարտի

Ամսիս 8-ին Բատաւիայից՝ Ջավայի հայ կոլոնիայի կողմից ուղարկվեց եւրոպական վեց մեծ պետութիւնների և Ամերիկայի վեհապետներին, նախագահներին և արտաքին գործերի մինիստրներին, ինչպէս և Լոնդոնի դեսպանների վեհաժողովին հետևեալ բովանդակութեամբ հեռագիրներ Թիւրքահայաստանի և Կիլիկիայի հայերի ողբալի դրութեան և հայկական հարցի առիթով.

«Խոնարհաբար հայցում ենք ձեր վեհափառութեան զօրեղ միջամտութիւնը՝ վերջ դնելու Թիւրքահայաստանում և Կիլիկիայում շարունակվող սարսափներին, սիստեմատիկ հալածանքներին և մեր եղբայրների կոտորածներին, մտցնելու ռեֆորմներ և երաշխաւորելու կեանքի, պատւի և ինչքի ապահովութիւն՝ համաձայն Բեռլինի վեհաժողովի 61-րդ յօդւածի»։

Ջավահայ

Ց. Գ.—Սինգափուրի հայերն ևս նոյն մտքով հեռագիրներ են խփել ռուսաց Կայսրին, անգլիական Թագաւորին և ֆրանսիական հանրապետութեան նախագահին։

—

Բեռլինի «Unterhaltungs heilage der Tàglichen Rundschau» թերթի №№ 51-ի և 52-ի մէջ տպված են կոմս Վեստարպի յօդւածները Unter «Armenienund Kurden» (Հայերի և քիւրդերի մէջ) վերնագրով։ Հեղինակը նկարագրում է այդ յօդւածների մէջ իր ուղևորութիւնը և ստացած տպաւորութիւններն ու կարծիքը հայերի և քիւրդերի մասին։ Այդ յօդւածների էութիւնը կը տանք մեր ընթերցողներին։

—

«Հնչակեան» կուսակցութիւնը մի կոչ է ուղղել եւրոպական մեծ պետութիւններին և ժողովուրդներին հայոց հարցի մասին։ Ցայտնելով որ նա, իբրև 25 տարի գոյութիւն ունեցող հայ քաղաքական մի կուսակցութիւն, իրան իրաւունք է համարում հայկական desiderta-ների թարգման լինել, նա ներկայացնում է իր կողմից ևս մի ծրագիր, որով պէտք է լուծվի հայոց հարցը։

Ռէֆորմների մի ծրագիր ևս մշակել և ներկայացրել է ուր հարկն է «Դաշնակցութիւն» կուսակցութիւնը։

ՅԻՇԱՏԱԿԱԳԻՐ ԿԻԼԻԿԻԱՅԻ ԱՅԺՄԵԱՆ ՎԻՃԱԿԻ ՄԱՍԻՆ

—

Մենք ստացանք Պարիզից հետևեալ տեղեկագիրը, որ ուղարկված է եւրոպական մի քանի նշանաւոր թերթերի՝ «Յիշատակագիր Կիլիկիայի այժմեան վիճակի մասին» վերնագրով։

«Կիլիկիայում մի քանի ամիսներից ի վեր կացութիւնը շատ անհանգստացուցիչ կերպարանք է ստացել։ Յարաբերութիւնները քրիստոնեայ և միւսուլման տարրերի միջև լարված են։ Միւսուլմանների մէջ բազմաթիւ են այնպիսիք, որոնք մտածում են միայն վերսկսել կոտորածները, որոնք 1909 թ. արիւնահեղեցին Ադանայի վիլայէթը։

«Իշխանութիւնները վարվում են միշտ իրանց սովորական աչառութեամբ. Նրանք բացարձակապէս ներողամիտ են դէպի միւսուլմանները և նրանց գործած ոճիրները, իսկ խիստ և անարդար՝ հայերի վերաբերմամբ։ Երկիրը գտնվում է ողբալի անիշխանութեան մէջ։ Միւսուլման աւազակների հրոսակներ աւերում են երկիրը ամեն կողմ և այդ աւազակներից ոչ մինը ոչ պատժվում է, ոչ նոյնիսկ անհանգստութեան ենթարկվում։

«Հայ կանանց և ջահել աղջկանց առևանգումը և նրանց բռնի իսլամացումը աւելի և աւելի յաճախ են կրկնվում Կիլիկիայում—ինչպէս նաև բոլոր հայկական նահանգներում—և խրախուսվում են, նպաստաւորվում իշխանութիւնների կողմից։ Թիւրքական մի օրէնքի կամ սովորութեան համաձայն, ամեն մի միւսուլման, որ առևանգել է և իսլամացրել մի քրիստոնեայ կին, ազատ է զինուորական ծառայութեան պարտականութիւնից պատերազմի ժամանակ. և բազմաթիւ են այն միւսուլմանները, որոնք այժմ կամենում են օգտվել այդ օրէնքով։

«Հարիւրից գոնէ մի օրինակ բերենք։

«15 տարեկան մի հայ աղջիկ, Լուսաբեր անունով, առևանգվեց Քիլիսէում (Կիլիկիա) ականաւոր միւսուլման Սալիհ էֆէնդիի ձեռքով և տարվեց Հալէպ. աղջիկը մինչև այժմ փակված է մնում Հալէպի մուֆթիի տանը, չը նայելով իր ծնողների և Կիլիկիայի հայոց հոգևոր իշխանութեան բոլոր դիմումներին։

«Պատահում է նաև, որ թիւրքերը յափշտակում և իսլամացնում են այն հայերի կանանց, որոնք իբրև զինուորներ այսօր պատերազմի դաշտի վրա են գտնվում։ Այդ վրդովեցուցիչ երևոյթը կատարվել է մի քանի անգամ Կիլիկիայում և Մեծ-Հայաստանում։

«Զէյթունի և Հաջընի մի խումբ հայեր մերժել են գնալ պատերազմ և փախել են սարերը։ Դրանք բացառութիւններ են. այդ փախստականները քաջալերութիւն չեն գտել հայ ժողովրդի կողմից։ Հայերի ահագին մեծամասնութիւնը լոյալութեամբ կատարել է իր զինուորական պարտականութիւնը։ Սակայն կառավարութիւնը փքեցրել է գործը և այդ մի բուռն հայերի անհատական վարմունքի մէջ նկատել է ապստամբական մի ամբողջ պլան և ուղարկել է բազմաթիւ զօրք ու թնդանօթներ Զէյթուն, Հաջըն և Կիլիկիայի այլ տեղերը։

«Բոլոր այդ զինեալ ոյժերի ներկայութիւնը աւելի ևս գրգռեց միւսուլմանների մոլեռանդութիւնը և ատելութիւնը հայերի դէմ»։

Այս տեղեկագրին, որ տպված է նաև ֆրանսիական թերթերում, կցված է նկարագրութիւնը մի շարք հարստահարութիւնների, որոնք կատարված են Սիս, Այնթապ, Բախչէ և Հաջըն, և ապա թարգմանաբար առաջ է բերված «Մշակի» մէջ մարտի 6-ին տպված նամակը Ադանայից։

ՆԱԽ ԽՈՐՀԵԼ, ԱՊԱ ԹԷ ԳՈՐԾԵԼ

—

«Բիթլիսում, Էրզրումում և Վանում քիւրդերը սպառազինման տենդային գործողութիւնները շարունակում են։ Գաղթականութեան հոսանքի առաջը դէպի Ռուսաստան անկարելի է առնել։ Կ. Պոլսի հայոց պատրիարքի խնդիրքով ֆրանսիական և ռուսական դեսպանները պահանջեցին Բ. Դռնից զօրքեր ուղարկել Քիւրդստան՝ հայկական ջարդերը խափանելու համար։ Բ. Դուռը կարգադրել է ուղարկել զօրքեր»։

Ես բառ առ բառ արտագրեցի այս տողերը «Մշակի» № 69-ից, և արդ, ընթերցող, խոնարհաբար խնդրում եմ կրկին, երեքկին կարդալ արդէն ընթերցածդ բառերը. կարդալ ուշի ուշով և առանձնակի ուշադրութիւն դարձնել Կ. Պոլսի հայոց պատրիարքի դիմումին։

Գիտեմ, կը համաձայնես ինձ հետ, որ պատրիարքի այսօրինակ դիմումը արված է եղել բացառապէս մորթոտվող թիւրքահայ ժողովրդի շահերն ի նկատի ունենալով։

Բայց տեսնենք, թէ կա՞յ արդեօք այս դիմումի մէջ գէթ նուազ չափով խոհականութիւն, քաղաքական հեռատեսութիւն, դիպլոմատիկական հոտառութիւն։

Ոչ և ոչ։

Ասացէք, խնդրեմ, ինչ կը նշանակէ կամովին թիւրքահայ ժողովրդի վզին փաթթել լքված և կատաղած, ջարդ ու փշուր եղած և սովալլուկ թիւրք զօրքը։

Մի՞թէ նրա համար միայն, որ այդ գազան կտրած վայրենի և բոկոտն տարրը երթայ, հէնց իր տեղում, դժբաղդ Թիւրքահայաստանում, միանայ «սպառազինման տենդային գործողութիւններ» կատարող վայրենաբարոյ քիւրդ հորդաներին և քիւրդի ձեռքով պակաս թողածն էլ նա աւարտի։

Չը լինի թէ հայկական իւրատեսակ մոռացկոտութեամբ յիշողութիւններիցս անցաւ, որ հէնց այդ զօրքն էր, որ թիւրք խուժանի, աւազակ քիւրդերի և այլ խուժադուժ ամբոխի հետ ձեռք-ձեռքի տուած կատարեցին սոսկալի, մազեր փշաքաղող, մինչև երկինք աղաղակող գազանութիւններ 1894—1895-ին անտիրական մնացած Թիւրքահայաստանում, որի արդիւնքը 300,000 զոհերն եղան։

Մի՞թէ նոյն այդ զօրքերը չէին, որոնք միացած Կիլիկիայի այլ գազանների հետ՝ ստեղծեցին Ադանայում արեան բաղնիքներ, որի արդիւնքը 30,000 անմեղ զոհերն են, որոնց արիւնը դեռ այսօր էլ չէ ցամաքած, որոնց կիներն ու երեխաները, քոյրերն ու մայրերը, հարսերն ու աղջիկները դեռ այսօր էլ իրանց աչքերից թափում են դառն արցունք։

Այդ զօրքերը չէին արդեօք, որ «խաղաղեցնելու» պատրուակի ներքոյ ծածկված՝ վառում, հրդեհում, քանդում, ջարդում, կոտորում էին ամեն ինչ և ամենքին, թէ անցեալում և թէ դեռ ևս մօտ ապագայում։

Մոռացութեա՞ն տուինք, որ նոյն այդ «խաղաղարար» զօրքերն էին, որ իրանց սուինների ծայրերով յղի հայ մայրերի արգանդներն էին պատռում գիշատիչ գազանների նման և անգթօրէն, ամենայն սառնասրտութեամբ նրանց արգանդների պտուղը սուր սուինների ծայրերին հագցնելով՝ օդի մէջ ճօճում։

Եւ արդ, մի՞թէ սրանք պիտի լինեն «խափանարարները»՝ հայկական սպասվող մասսայական ջարդերի։

Ոչ երբէք։

Կ. Պոլսի սրբազան պատրիարքը փոխանակ այսպիսի դիմումներով ձանձրացնելու ռուսական և ֆրանսիական դեսպաններին՝ գերազանցօրէն գեղեցիկ քայլ արած կը լինէր, եթէ նոյն այդ դեսպաններից խնդրէր, որպէսզի նրանք իրանց ստորադրեալ հիւպատոսներին հրահանգ տային՝ դիւրութիւններ ստեղծել հայ ժողովրդի ինքնապաշտպանութեան համար և կամ, առնուազն, խնդրել, որպէսզի, փոխադարձ համաձայնութեամբ ֆրանսիական և ռուսական կառավարութիւնների, ռուս զօրքերը մտնէին Թիւրքահայաստան և առհասարակ այն վայրերը, ուր վտանգ է սպառնում թիւրքահայերին, և պաշտպանէին նրանց սպառնացող ջարդերի ու թալանների դէպքում, եթէ առհասարակ դիմումները ունենն որևէ նշանակութիւն։

Այսօր փաստ է ու իրականութիւն, որ թիւրքահայը գալիք խժդժութիւններից իր գլուխը ազատելու համար՝ գաղթում է։

Եւ այդ դեռ այն ժամանակ, երբ Թիւրքահայաստանի տէրրիտորիայի վրա համարեա թիւրք զօրքեր չը կան, քանի որ նրանք, երիտասարդ-թիւրքերի կամքով, ուղարկված են Եւրոպական Թիւրքիայի վերջին կռուների վրա վերջնականապէս ջարդ ու փշուր լինելու։

Այժմ, երևակայեցէք, ընթերցող, դարերի ընթացքում՝ թիւրք զօրքերի գործ դրած բաշիբոզուկութիւնների շնորհիւ սարսափահար եղած թիւրքահայի վիճակն ու դրութիւնը, երբ նա իր առաջ ցցված տեսնի «անդորրութիւն պահպանելու» նպատակով մեր երկիրն ուղարկված գազանացած, քրիստոնեաների վրէժը լուծելու տենչանքով լցված մերկանդամ և սովալլուկ թիւրք զօրքը։

Չէ՞ որ եթէ ներկայիս գաղթողների թիւը, դիցուք, $30^{0}/_{0}$-ի է հասնում, թիւրք «խաղաղարար» զօրքերի ներկայութեան դէպքում այդ գաղթը յոյժ լայն ծաւալ կը գտնի, մասսայական կերպարանք կառնի։

Եւ ո՞վ է, արդեօք, երաշխաւորում, որ երիտասարդ-թիւրք կառավարութեան ուղարկած զօրքերի ներկայութիւնից աւելի ես չեն խրախուսվի քիւրդ և այլ ընչաքաղց ճիւաղները և աւելի եռանդով չեն դիմի հայ տարրի բնաջնջման «վեհ» գործին։

Ասացէք, խնդրեմ, այն ե՞րբ է եղել, պատմութեան ո՞ր էջի մէջ արձանագրված, որ Ջարդարար Թիւրք կառավարութիւնը առ հասարակ և Ադանայի ջարդը կազմակերպող երիտասարդ Թիւրք իշխանութիւնը մասնաւորապէս այժմեանի նման հեշտ կերպով ընդունէր դեսպանների առաջարկը և անմիջապէս կարգադրէր զօրքեր ուղարկել Թիւրքահայաստան։

Եւրոպական մեծ պետութիւնների բոլոր դեսպանների հաւաքական դիմումներն անգամ շատ ու շատ անգամներ մնացել են անիրագործելի. արդ, այդ ինչիցն է, որ ներկայիս Թիւրք կառավարութիւնը անմիջապէս «բաշի էֆէնդիմ» է ասում երկու դեսպանների առաջարկին։

Թերևս ինձ ասեն, որ ներկայիս Թիւրքիան ստիպված է զգում իրան ի կատար ածել եւրոպական դեսպանների Թելադրանքն ու կամքը, որովհետև նա՝ Թիւրքիան այժմ ուժասպառ է եղած։

Թոյլ տուէք այդ հանգամանքին ոչ մի կարևորութիւն չը տալ, այլ ասել, որ այդպիսի սիրալիր և անմիջական կարգադրութեան տակ մի խոշոր «և» է Թաքնված։

Եւ այդ «և»-ը ոչ այլ ինչ է, եթէ ոչ սարսափի մէջ պահել Թիւրքահային, հարկադրել նրան գաղթականութեան ցուպը ձեռք առնել, հնարաւորութիւն չը տալ Թիւրքահային ինքնապաշտպանութեան նպատակով զինվել, առաջն առնել Թիւրքահայերի ենթադրեալ ապստամբութեան և... և հարկ եղած դէպքում «խաղաղեցնել» Թիւրքահայերին և «եղբայրական» ձեռք մեկնել իսլամ, քիւրդ ու Թիւրք հորդաներին և ջարդել, ջարդել հայերին, մինչև որ Թիւրքահայաստանը դատարկվի, ուր կարելի լինի բնակեցնել երբեմնի Եւրոպական Թիւրքիայից դէպի Ասիական Թիւրքիա գաղթող իսլամներին։

Ահա ձեզ ամբողջը։ Ահա ձեզ դիւային ծրագրի ամբողջ պատկերը, որ գաղտնապէս պատրաստվում է, և մենք մեր կարճատեսութեան շնորհիւ չենք տեսնում այդ, չենք զգում դիւանագիտութեան մէջ ոչ մի հոտառութիւն չունենալու պատճառով։

Եւ վաղը ի՞նչ կը լինի։ Կը լինի այն, որ մեր խնդրանքով օր առաջ, քանի դեռ Հայաստանի լեռների ձիւնը չէ հալվել, մեր երկիրն ուղարկված Թիւրք զօրքերը կը կատարեն իրանց «պատմական դերը, պարտքը», երբ արդէն «ամենայն ինչ կատարեալ» կը լինի։

Թիւրքական գազանացած զօրքը չէ, որ պիտի ազատէ հային քիւրդի ճիրաններից։ Ոչ և հազար անգամ ոչ։

Մեզ այդ ճիրաններից ազատողը մեր իսկ սեփական բազուկները պիտի լինեն, մեր ինքնազոհութիւնը միայն կը փրկէ մեզ։

Ընդունակութիւն ունե՞նք արդեօք զոհաբերութիւն անել յօգուտ ինքնապաշտպանութեան։

Եթէ ունենք, իրաւունք է մեզ ապրել, իսկ եթէ չունենք, պիտի մեռնենք, պիտի ոչնչանանք, ազգովին բնաջինջ պիտի լինենք, Թիւրքահայաստանում ոչ մի հայ չը պիտի մնայ և Թիւրքահայաստանը պիտի մնայ միայն իբրև մի պատմական տերմին։

Այս է ապացուցում դարերի մեր արիւնալի պատմութիւնը, այս են փաստում մեր պատմութեան վերջին տարիների կարմիր էջերը։

Յար. Գասպարեան

«ԲԻՒԶԱՆԴԻՈՆԻ» 5000-ԹԻՒԵԱԿԸ

—

Մարտ ամսի 22-ին, Կ. Պոլսի «Բիւզանդիոն» Թերթը հրատարակեց իր 5000-րդ Թիւը, սկսեալ իր հիմնարկութեան օրից, այն է 1896 Թ. նոյեմբերի 4-ից։

Մինչև այդ Թւականը, «Բիւզանդիոնի» հիմնադիր Բիւզանդ Քէչեանը ամբողջ 20 տարի աշխատակցում էր հայ մամուլին («Մասիս», «Մամուլ», «Թերճեմանը-էֆքեար» և «Արևելք» Թերթերի մէջ)։

Այդ 5000-Թեւակի տօնման առիթով «Բիւզանդիոնը» իր 5001-դ և 5002-դ համարներում զետեղել է բացի խմբագիր Բիւզանդ Քէչեանի և մշտական աշխատակից Արշակ Ալպօյաճեանի յօդուածներից՝ նաև զանազան գրողների և գործիչների յօդուածներ, բանաստեղծութիւններ, ինչպէս Տիգրան Կամսարականի և Մ. Կիւրճեանի, Վահան Թէքէեանի, տիկին Զաբէլ Ասատուրի, տիկին Զարուհի Գալէմքեարեանի, Հրանտի (Կիւրճեան), Տիրան Չրաքեանի, Մինաս Չերազի, Օրմանեան արքեպիսկոպոսի, Գրիգոր Զօհրապի, Հ. Առաքելեանի, Գասպար Չերազի, Լևոն Մկրտիչեանի, Ջիֆթէ-Սարաֆի, Արշակուհի Թէօդիկի, Սահակ-Մեսրոպի։

Ռուսահայերին ծանօթացնելու համար «Բիւզանդիոնի» այժմեան ուղղութեան հետ, անօգուտ չենք տեսնում արտատպել Հ. Առաքելեանի յօդուածը «Իմ ողջոյնը» վերնագրով, գրված Թիֆլիսից մարտի 4-ին։

Սիրով և համակրութեամբ ողջունում եմ «Բիւզանդիոն» Թերթի 5000-րդ Թիւը, երբ ապացոյց այն յամառ, տոկուն և աննկուն գործունէութեան, որ այդ Թերթը արտայայտել է յընթացս բազում տարիների, այն եւ համիդեան պէս մի անագորոյն ռէժիմի օրով։

Պէտք է ասել, որ «Բիւզանդիոնը», մանաւանդ վերջին տարիներս, եղել է Թիւրքահայ Թերթերից ամենատարածվածը և կարդացվածը Թիւրքիայից դուրս գտնվող հայութեան և գլխաւորապէս Ռուսաստանի հայութեան մէջ։

Մենք ռուսահայերս, անկեղծօրէն խոստովանելով, այն կարծիքն և համոզումն ունենք, որ Թիւրքահայ Թերթերը զուրկ են լուրջ, անշահասէր բնաւորութիւնից և յաճախ կանգնած չեն իրանց կոչման բարձրութեան վրա, որ ոչ Թէ այդ Թերթերն իրանք են ղեկավարում հասարակական կարծիքը, այլ աւելի շուտ իրանք են ղեկավարվում հասարակական կարծիքից։ Գուցէ — և շատ հաւանօրէն — մենք սխալվում ենք մեր կարծիքի մէջ, բայց եթէ նոյն իսկ ճիշդ լինի մեր այդ կարծիքը, այնուամենայնիւ նա չէ կարող վերաբերվել «Բիւզանդիոնին», որ Թողել է մեզ վրա լուրջ օրգանի տպաւորութիւն, օրգանի՝ որ խոյս է տուել ռէկլամներից, շառաչուն և Թեթևսոլիկ վերնագիրներից, որով — աւաղ — Կ. Պոլսի հայ Թերթերից շատերը սիրում են զարդարել իրանց էջերը։

Մի այլ մեծ Թերութիւն, որ մենք վերագրել ենք Կ. Պոլսի հայ մամուլին, այն է՝ որ նա շատ քիչ է զբաղվել և զբաղվում է մայր երկրի, տառապեալ և բազմաչարչար Հայաստանի, գաւառական հայ ժողովրդի տնտեսական, մտաւոր, բարոյական կեանքի ուսումնասիրութեամբ. այդ Թերութիւնը ամենից քիչ տեղ է գտել «Բիւզանդիոնի» էջերում։ Համարձակ կարելի է ասել, որ Թէ համիդեան րէժիմի օրով, Թէ վերջին շրջանում՝ «Բիւզանդիոնը» Թիւրքահայ Թերթերից — բացառութեամբ երևի «Ազատամարտի» — ամենից շատն է նուիրել իրան այդ ուսումնասիրութեան։ Ես ասացի՝ բացառութեամբ երևի «Ազատամարտի», որովհետև նախ՝ այդ Թերթը կանոնաւորապէս կարդալու առիթը չեմ ունեցել, երկրորդ՝ նա հրատարակվում է միայն վերջին մի քանի տարին, իսկ ես խօսում եմ Թիւրքահայ այն Թերթերի մասին, որոնք երկարամեայ գոյութիւն են ունեցել։

Մի այլ արժանիք, որ ունեցել է «Բիւզանդիոնը» — արժանիք, որ Թիւրքիայից դուրս ապրող հայութիւնը գնահատել է — այն է եղել է, որ նա ամենից շատ յարաբերութիւն է պահպանել այդ հայութեան հետ և տեղեկութիւններ հաղորդել Թիւրքահայ հասարակութեանը նրա մասին, որով աշխատել ձգտել է ամուր պահել կապերը հայութեան զանազան հատուածների միջև։

Գալով ուղղութեանը, դաւանանքին, որին մենք, ռուսահայերս, ամենից շատ կարևորութիւն ենք տալիս, մանաւանդ հայ Թերթի համար, մենք նրա մասին մի քիչ աւելի կը խօսենք։

Հայ ժողովուրդը, իր համար աննպաստ կերպով դասաւորված պատմական-աշխարհագրական - քաղաքական պայմանների պատճառով, գտնվում է բոլորովին բացառիկ հանգամանքների մէջ։ Նրա դրութիւնը նոյնը չէ, ինչպէս քաղաքական անկախութիւն ունեցող և որոշ հողամասի վրա, որոշ երկրում ապրող ազգութիւնների դրութիւնը։ Նա ապրում է օտար ազգերի իշխանութեան ներքոյ կամ իբրև հպատակ — և ամենամեծ մասը այդպէս է — կամ իբրև քաղաքացի։ Շատ քիչ տեղերում ճանաչում են նրան իբրև հաւասար իրաւատէր քաղաքացի։ Ունենալ սեպարատիստ, անջատողական ձգտումներ կամ երազանք՝ երբևիցէ ձեռք բերել քաղաքական անկախ գոյութիւն՝ նա չէ կարող. և այդ՝ պարզապէս այն պատճառով, որ պատմական-աշխարհագրական պայմանների աննպաստ դասաւորումների շնորհիւ անհնարինից անհնարինն է այդպիսի ձգտման և ցնորքի իրագործումը։ Հետևաբար, հայ ազգը, ուր և լինի, կարող է գոյութիւն ունենալ և ապրել միայն իբրև մի կուլտուրական տարր, ժողովուրդ, որովհետև նա եղել է ինքն հնումն կուլտուրական, այն է քաղաքակրթական տարր։ Ապրելով իբրև կուլտուրական տարր, նա, անկասկած, իրան տիրապետող կամ շրջապատող ազգութիւնների մէջ պէտք է ընդգրկէ մի որոշ ուղղութիւն, որոշ քաղաքական դաւանանք՝ Թէ իբրև հայ և Թէ իբրև քաղաքացի։ Այդ ուղղութիւնները բազմատեսակ են — աջակողմեան, ձախակողմեան, ծայրայեղ, պահպանողական, ազատամտական, պրօգրեսիստ, յետադիմական, ազգայնական, կօսմօպօլիտական, դեմօկրատիկական, յեղափոխական, անիշխանական, և այլն։ Արդ, մեր կարծիքով, հայը պարտաւոր է իր ազգային գոյութիւնը պահպանելու, իր ազգային հոգեոր-բարոյական անկախութիւնը վտանգի չենթարկելու համար՝ ընդգրկել ազգային-ազատամտական կամ ազգային պրօգրեսիստ-դեմօկրատիկ ուղղութիւնը, այլ խօսքով՝ սահմանադիր-ռամկավար ուղղութիւնը։ Ոչ ծայրայեղ պահպանողականութիւնը, ոչ ծայրայեղ ազատամտականութիւնը, կամ սօցիալիստական ուղղութիւնը յարմար չեն և չեն կարող պիտանի լինել հայ ժողովրդին, ուր և լինի նա։ Մեր աչքի առաջն է մեր յեղափոխական կուսակցութիւնների գործունէութեան դառն արգասիքը, որ ջլատեց մեր ազգային միութեան ոյժերը, ուժասպառ դարձրեց մեզ և տկարացրեց։

Ի հարկէ, Համիդի ստրկալի և դժնդակ րէժիմի ներքոյ, հայ Թերթը անկարող էր մտածել որևէ ուղղութեան մասին։ Այն եւ մեծ ծառայութիւն էր, եթէ հայ Թերթը կարողանում էր պահպանել իր խեղճուկ գոյութիւնը և գոնէ տարածում էր հայ ընթերցանութիւն, պաշտպանում էր հայ լեզուն։ Սակայն, երբ Թիւրքիայում, յեղափոխութիւնից յետոյ, հրատարակվեց մամուլի ազատութիւն, համեմատաբար առաջվանից շատ լայն, հայ Թերթը պարտաւոր էր ընդգրկել այն ուղղութիւնը, որ ամենից շատ համապատասխան էր հայ ժողովրդի կենսական շահերին և պահանջներին։

Եւ ահա ուրախութեամբ պէտք է արձանագրենք, որ «Բիւզանդիոնը» ընդգրկեց մեր մատնացոյց արած ազգային-ազատամտական կամ պրօգրեսիստ-դեմօկրատիկ ուղղութիւնը և կարողացաւ ըմբռնել, Թէ ո՛ր ուղղութիւնն է ամենից րէալը, ամենից օգտակարը՝ հայ ժողովրդի համար։

Ցանկանում եմ «Բիւզանդիոնին» աւելի լայն և աւելի եռանդուն գործունէութիւն այդ ուղղութեան մէջ։

Ցանկանում եմ «Բիւզանդիոնին» մի գեղեցիկ օր եւս հրատարակել իր 10,000-րդ Թիւը։

ՈՒՐՄԻԻ ԼՃԻ ՎՐԱ ՆԱՒԱՐԿՈՒԹԵԱՆ ԿՈՆՑԵՍԻԱՆ

—

«Մշակի» ընթերցողները գիտեն, որ Ուրմիի լճի վրա նաւակներ և շոգենաւակներ բանեցնելու իրաւունքը կամ կոնցեսիան անցեալ տարի ձեռք է բերել Ջիբրայիլ Բուդաղեան անունով մի հայ վաճառական, սալմաստեցի, ռուսահպատակ։ Այդ կոնցեսիան նա ձեռք է բերել շահզադէ Իմամ Կուլի միրզայից, որ պայմանագրով կապալով է տուել նաւագնացութիւնը յիշեալ Բուդաղեանին 10 տարի ժամանակով, և պայմանագիրը հաստատվել է Թաւրիզի ռուսաց հիւպատոսի կողմից։

Սակայն վերջին ժամանակ հեռագիրները յայտնեցին, Թէ ռուսաց կառավարութիւնը համաձայնելով տալ Պարսկաստանին պարտք և իբրև աւանս 2 միլիոն ռուբլի, պայման է դնում, որ պարսից կառավարութիւնը տայ Ռուսաստանին նաև Ուրմիայի լճի վրա նաւարկութեան կոնցեսիան։ Բայց բանից դուրս է գալիս, որ երբ բանակցութիւններ էին վարվում պարսից և ռուսաց կառավարութիւնների միջև փոխառութեան մասին, ռուսաց արտաքին գործերի մինիստրութիւնը պայման էր դրել, որ պարսից կառավարութիւնը տայ Ջուլֆա-Թաւրիզ երկաթուղու գծի կառուցման և Ուրմիայի լճի նաւարկութեան կոնցեսիաները։

Մի զարմանալի Թիւրիմացութեամբ, որ լաւ բնորոշում է ռուս դիպլոմատներին, տեղի է ունենում մի մեծ սխալ։ Թէհրանի ռուսաց դեսպանատունը այնպէս է ըմբռնում Պետերբուրգի արտաքին գործերի մինիստրութեան հեռագիրը, Թէ կոնցեսիա պէտք է ստանալ Ջուլֆա-Թաւրիզի և Թաւրիզ-Ուրմիայի երկաթուղային գծի համար, մինչ արտաքին գործերի մինիստրութիւնը lac Ourmia (լիճ Ուրմիա) խօսքով ի նկատի է ունեցել նաև նաւարկութեան կոնցեսիան։ Երբ դեսպանը ստանում է պարսից կառավարութիւնից կոնցեսիան՝ անց կացնելու երկաթուղու գիծ Ջուլֆայից Թաւրիզ և այդտեղից մինչև Ուրմիայի լիճը, նա հեռագրում է, Թէ ստացվեց կոնցէսիան Ջուլֆա-Թաւրիզի և Ուրմիայի լճի։ Մինիստրութիւնը այնպէս է հասկանում, Թէ, ուրեմն, ստացվել է Ջուլֆա-Թաւրիզ երկաթուղագծի և Ուրմիայի լճի նաւարկութեան կոնցեսիաները և իսկոյն որոշում է տալ փոխառութեան աւանսը։ Միայն վերջին րոպէին սխալը բացվում է, և երբ ռուսաց կառավարութիւնը պահանջում է ուղղել սխալը և տալ նաև Ուրմիայի լճի նաւարկութեան կոնցեսիան, պարսից կառավարութիւնը մերժում է, ասելով որ ինքը կատարել է բոլոր պայմանները և նոր պայման ընդունել չէ կարող։ Ռուսաց կառավարութիւնը Թէև 2 միլիոն ռուբլի աւանս տալու խոստումը որոշում է գործադրել, բայց դարձեալ պնդում է նաւարկութեան կոնցեսիայի վրայ։

Արդ, շատերը տարակուսած կը մնան, Թէ ինչո՞ւ է ռուսաց կառավարութիւնը դիմումներ և ջանքեր անում ստանալու Ուրմիայի լճի նաւարկութեան մենաշնորհը, քանի որ այդ մենաշնորհը արված է արդէն մի ռուսահպատակի՝ Ջիբրայիլ Բուդաղեանին։ Վերջին պոստով ստացված ռուս Թերթերը բացատրում են այդ տարակուսանքը։ Հայ վաճառական Ջ. Բուդաղեանին կոնցեսիան 10 տարով տուել է շահզադէ Իմամ Կուլի միրզան, որ իր իրաւունքը Ուրմիայի լճի նաւարկութեան մենաշնորհի մասին հիմնում է իբր Նասր-Էդդին շահից ստացված մի ֆերմանի վրա։ Սակայն, ռուսաց կառավարութիւնը կասկածելի է համարում այդ ֆերմանի գոյութիւնը և գտնում է, որ լճի նաւարկութեան իրաւունքը պատկանում է միայն պետութեան, այլ ոչ մասնաւոր անձի, ուստի և վիճելի է համարում շահզադէի իրաւունքը։ Եթէ շահզադէն չը կարողանայ հաստատել իր իրաւունքը, այն ժամանակ նրա տուած արտօնութիւնն եւս Ջ. Բուդաղեանին ոչնչանում է, և կոնցեսիան երկարատև ժամանակով դիտաւորութիւն կայ ստանալ ռուսաց բանկի անունով։

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԿՌՈՒԻ ԹՈՔԱԽՏԻ ԴԷՄ

—

Մարդկութեան ամենադաժան պատուհասներից մէկը՝ Թոքախտը կամ տուբերկուլօզը անբուժելի հիւանդութիւն չէ, ինչպէս կարծում էին մինչև վերջին ժամանակները. ոչ. նա բուժելի է, բայց պէտք է մաքառել, պայքարել նրա դէմ շարունակ։

Հէնց ամենամեծ չարիքն այն գիտակցութիւն է, Թէ Թոքախտը անբուժելի է. պէտք է ոչնչացնել այդ վնասակար և սխալ գիտակցութիւնը. պէտք է համոզել մարդկանց, որ Թոքախտը բուժելի է, եթէ իր ժամանակին միջոցներ ձեռք առնվեն։

Եւ ահա համոզելու եղանակներից մէկն եւ հանդիսանում է այն ցուցահանդէսը, որ կոչվում է 2-րդ հակաԹոքախտային ցուցահանդէս դօկտօր Բրիմէնստալի և որի բացումը տեղի ունեցաւ ամսիս 6-ին, Արտիստական Ընկերութեան դահլիճում։

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԾՈՎԻ ԱՓԻՆ

(Լեգենդա)

...Եւ ալեկոծ ծովի հուժկու, կատաղի ալիքները ուժեղ Թափերով գնում էին, գալիս, զարկվում ծովափնեայ լերկ ժայռերին, փշուր-փշուր լինում ու խուլ աղմուկով նորից յետ փախչում ու նորից գալիս, և այդպէս անվերջ...

Պատմիչը նստած է մի քարի վրա և ոգևորված պատմում է, պատմում... իսկ նրա շուրջը բոլորած ընկերները լուռ ու անԹարթ ականջ են դնում։

Եւ նա պատմում էր։

* * *

Արեամբ ու արցունքով հեղեղված երկրի վրա դարերից ի վեր ապրում է մի սարսափելի գազան։

Անյայտութեան մէջ ծնվելով, նա աճեց աննկատելի կերպով և շուտով մարդկային կեանքում մի անխուսափելի ու սովորական բան դարձաւ, առանց որի մարդիկ անկարող էին ապրել։ Նրանք կերակրում էին գազանին իրանց եղբայրների ու որդիների արեամբ ու մսով, իսկ իրանք նրա լուռ ու անմռունչ ստրուկներն էին դարձել ու լիզում էին շարունակ նրա ոտքերը։

Հսկայ ու անգութ, ոռնում է սարսափելի գազանը լուսաբացին, կէսօրին և կէս գիշերին։ Իր անկուշտ որկորի համար կերակուր պահանջելով մռնչում է նա ինչպէս աշնանային փոԹորկաբեր քամին հսկայ ու անծայր անապատում, ու իրանց մռայլ բնակարաններում նրա մռնչոցի ահեղ ձայնից զարթնում են նրա անմռունչ զոհերը։

Զարթնում են և ուղևորվում դէպի նրա անկուշտ որկորը՝ մահվան գիրկը նետվելու համար։

Նա իր զոհերի տաք մարմնի մէջ է խրում սուր-սուր ճանկերը, պատառոտում սրտերը և ծծում նրանց արիւնը...

Եւ աճում է հսկայ գազանը, մեծանում, իսկ նրա զոհերը ապրում են անվերջ հառաչանքների ու արցունքի ծովերի մէջ։

Հսկայ գազանի շնչառութիւնից ծխի սև քուլաներ են բարձրանում և տարածվելով երկնակամարի վրա՝ ծածկում են մարդկանց աչքերից արևի փայլուն լոյսը, չորս կողմը տարածելով անԹափանցելի խաւար։

Երեկոյեան վերջալոյսի չքնաղ ֆօնի վրա, երբ փայլուն երկնակամարն է շողշողում ու հրաշալի գունաւորումներ ստանում, ծխի սև ամպերն են տարածվում, և փայլուն երկնակամարը կորչում է խաւարի մէջ։

Մարդկանց տենչանքով վառվող տխուր աչքերը ուղղվում են դէպի երկինք, լոյսի գէԹ մի փոքր նշոյլ տեսնելու համար, բայց նա լուռ է ու խաւար...

Իսկ երկրի վրա չը կան ոչ երջանկութիւն և ոչ բաղդաւորութիւն... Ուրախութիւնը վաղուց է մեռել այնտեղ։

Մերթ ընդ մերթ միայն լսվում են արբած ամբոխի խուլոտ աղաղակները և հեծեծանք... արտասուք...

Անվերջ արտասուք։

Ու այդ հեծեծանքների ու արցունքի միջից ատելութիւնն է ծնվում դէպի անգութ գազանը, ծաւալվում մարդկանց սրտերում։

* * *

Աճում, մեծանում է գազանը։

Սակայն նրա հետ միասին աճում է նաև մարդկանց ատելութիւնը դէպի նա։ Բոցավառվում են նրանց սրտերը վրէժի սրբազան կրակով, շարժվում են նրանց համր շրԹունքները, և խղճուկ, միշտ լուռ մարդիկ զարԹնում են դարաւոր քնից։

Նրանք միասին հաւաքվելով վիԹխարի խարոյկներ են վառում, որպէսզի նրանց բոցերի մէջ այրեն ատելի գազանին և... իրանք էլ այրվում են այդ կրակում...

Կծկվում, մռնչում է գազանը և, զգալով իր մօտալուտ վախճանը, կրկնապատկում է իր անգԹութիւնները։

Սակայն նա մօտենում է հսկայական քայլերով։

Զգում են այդ նաև նրա զոհերը և կրկնապատկում իրանց եռանդը։

Ու դողում է գազանը, մռնչում...

Մռնչա, անգութ գազան, երկաԹեայ ծանր մուրճերը բռնած հուժկու բազուկներ են մեկնվում դէպի քեզ։

Դողա, գալարվիր, մօտ է քո վախճանը։

* * *

Պատմիչը լռեց։

Նրա շուրջը բոլորած ընկերները գլուխները կախ՝ լուռ են ու անձայն։

Իսկ ալեկոծ ծովի հուժկու, կատաղի ալիքները ուժգին Թափերով գնում են, գալիս, զարկվում ծովափնեայ լերկ ժայռերին, փշուր-փշուր լինում ու խուլ աղմուկով նորից յետ փախչում ու նորից գալիս, և այդպէս անվերջ։

Վաղարշակ Թումանեան

Բագու

ԽՄԲԱԳԻՐՆԵՐԸ

(Ն. Ժիլկինի)

(Ազատ փոխադրութիւն)

—

Երբ բանտարկեցին չորրորդ խմբագրին էլ, N լրագրի խմբագրատանը լրջօրէն մտածել սկսեցին, Թէ հարկաւոր է փնտռել, գտնել մի հինգերորդին։ Հրատարակիչը ակնապիշ նայում էր իր շուրջը։ Այնտեղ կանգնած էին մի խումբ աշխատակիցներ, որոնք հետևում էին հրատարակչի հայեացքին անմեղ վստահութեամբ։

— Իսկ եԹէ ձեզնից որևէ մէկը, պարոններ, համաձայնէր...

— Չենք կարող, զուրկ ենք քաղաքացիական որոշ իրաւունքներից, — միաբերան գոչեցին նրանք պարզօրէն։

Հրատարակչի դրութիւնը ծանրանում էր։ Խմբագրատունը մռայլ պատկեր ստացաւ, լրագրի գոյութեանը վտանգ էր սպառնում. խմբագրի սով էր...

Եւ ահա մի օր հրատարակչի առանձնասենեակը ներս ընկաւ քարտուղարը. Նա ուզում էր մի բան ասել, բայց ներքին վրդովմունքը խանգարում էր։

— Այնտեղ... դուրսը... եկել են... — կմկմում էր նա։

— Ո՞վ է եկել, — հարցրեց երկիւղով հրատարակիչը։

— Եկել են... խմբագիրներ... հա՜հա՜հա՜...

— Ի՞նչ խմբագիրներ։

— Երկու Թափառաշրջիկներ... ապաստարանից...

— Երկու Թափառաշրջիկնե՞ր... ապաստարանի՞ց... Վերջապէս գործը ինչումն է, խօսեցէք կանոնաւոր, — ջղայնաբար գոչեց հրատարակիչը։

— Եկել են և կոտրտվում են երկու բոսեակ. «Ուզում ենք դառնալ խմբագիր, — ասում են նրանք, — յայտնեցէք ում հարկն է»։

— Դուք չէ՞ք տեսնում, — ցնծագին գոչեց հրատարակիչը, — ո՞ւր են նրանք։

— Ի՞նչպէս Թէ ուր են, — զարմացաւ քարտուղարը. — դռնապանը նրանց վռնտեց։

— Արտաքսե՞ց, ինչպէս. ա՜խ դուք, տխմարներ. յետ դարձրէք նրանց շուտով, խնդրեցէք, բերէք մօտս...

Եւ յուզված հրատարակիչը վազեց դէպի նախասենեակը։

Մի քանի րոպէ անցած, անհամարձակութեամբ առանձնասենեակ մտան երկու Թշուառներ... իսկ նրանց ետևից վայրենի հետաքրքրութեամբ դիտում էր... դռնապանը։

Հրատարակիչն անհամբերութեամբ դուրս ուղարկեց նրան և սկսեց դիտել հիւրերին..

Իսկական սանկիւլօտներ...

— Նստեցէք, խնդրեմ, — հրաւիրեց հրատարակիչը։

Հիւրերը, քաշվելով, նստեցին. Նրանցից սակայն ակնյայտնի փչում էր օղու կծու հոտը։

Հրատարակիչը բնազդաբար յետ-յետ գնաց, սակայն... յիշեց իր դառն դրութիւնը և ծայրայեղ քաղաքավարութեամբ խօսեց.

— Այդպէս ուրեմն, դուք կը ցանկանայիք լինել... խմբագիր։

— Такъ-точно, — խռպոտ և միաձայն համաձայնեցին բոսեակները. — կարող ենք դառնալ խմբագիր։

Եւ նրանք նայում էին ազնիւ, մաքուր աչքերով՝ բաւականին տարօրինակ, կարմիր, ուռած, բրդոտ դէմքերի վրա։

— Այդպէ՜ս, — ասաց մտածկոտ հրատարակիչը, — բայց դուք գուցէ իմանաք ձեր յանձն առած գործի պատասխանատուութիւնը. ձեզ կարող են բանտարկել։

— Գիտենք, ինչպէս չէ. մենք արդէն համն առել ենք, նստել ենք։

— Լաւ. իսկ ինչպէս է ձեր հասցէն. գիտէ՞ք, հարկաւոր է յայտնել։

— Հասցէ՞ն. բայց դա պարզ է. ապաստարան, համար...

— Ոչ, ոչ, — արագութեամբ ընդհատեց հրատարակիչը, — անյարմար է։ Ну, այդ մենք կը սարքենք։ Իսկ այժմ ասացէք, ձեզնից ո՞ւմն է առաջին հերԹը։

— Բոլորը մէկ է, որը ցանկանաք։

Հրատարակիչը ժպտաց և ձեռքերը շփեց. ապա մտածեց մի քիչ և կիսաձայն ասաց.

— Ուրեմն երկուսն արդէն կան։ Գուցէ 2 շաբաԹ բաւականանայ։ Իսկ յետոյ մենք կը մտածենք։

Սանկիւլօտներից մէկը շարժվելով, քաղաքավարութեամբ դարձաւ նրան.

— Թոյլ տուէք զեկուցանել. եթէ կարիք լինի, էլի կան։

— Ի՞նչ կան։

— Խմբագիրներ... Մեզ մօտ արդէն այդ մասին խօսակցութիւն եղել է. միասին ենք որոշել. բոլորն էլ ցանկանում են, համաձայն են օգնելու. ահա մենք, երկուսս, այսպէս ասած՝ պատգամաւորներ ենք։

— Ահա Թէ ի՜նչ. շատ ուրախ եմ. և քանի՞սն են ընդամենը։

— Քսանչորս հոգի ենք, — յայտնեց համեստութեամբ բոսեակը, ձեռքը տարաւ դէպի բերանը, հազաց, պարզ հայեացք ուղղեց հրատարակչի փորձող սքանչացած նայուածքին։

— Հիանալի. այժմ ուրեմն գնացէք, պարոններս. վաղը մենք ամէն բան կարգի կը դնենք. եկէք ժամը 10-ին։

— Հը՜, ինչպէս է, — հրճուանքով ասաց հրատարակիչը բոսեակների հեռանալուց յետոյ իր քարտուղարին. — ոչ, դեռ եւս երկրիս վրա կան բարեհոգի անձնաւորութիւններ...

Նա կանգ առաւ, ուղղվեց և գոչեց ոգևորութեամբ բարձրացնելով ձեռքը.

— Երդվում եմ, եթէ գործը աջողութեամբ պսակվի և լաւ եկամուտ լինի...

Քարտուղարը սրտատրոփ սպասում էր։

— Երդվում եմ... որ կը կառուցանեմ մի նոր ապաստարան...

(«Р. С.») Եղբէթ

Գանձակ

Առաջին ցուցահանդէսը տեղի ունեցաւ 1904 թւին։

Թոքախտի դէմ կռւելու փորձը՝ առաջին անգամ Թիֆլիսում սկսվեց 10 տարի առաջ, երբ Կայսերական Բժշկական Ընկերութեան մէջ կարդացվեց մի զեկուցումն։ Ապա կազմվեց մի առանձին յանձնաժողով և դրանից յետոյ՝ Թոքախտի դէմ կռւելու համար կայս. Կովկ. Ընկերութիւնը, որ իրան նպատակ դրեց համոզել ազգաբնակութեանը, թէ հնարաւոր է կռիւը թոքախտի դէմ։ Այդ միտքը ամենաշօշափելի կերպով ապացուցեց դոկտոր Բլիւմէնտալի առաջին հակաթոքախտային ցուցահանդէսը Թիֆլիսում 1944 թ.։

Ներկայ 2-րդ ցուցահանդէսը կազմակերպված է նոյն նպատակով, ուստի և մենք յորդոր ենք կարդում ազգաբնակութեան գնալ այցելել այդ ցուցահանդէսը, լսել բժիշկների բացատրութիւնները, ծանօթանալ այդտեղ հաւաքված նիւթերի հետ, համոզվելու համար որ կռիւը թոքախտի դէմ հնարաւոր է։

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

◆ Բաթումից «Кавказъ»-ին հեռագրում են. «Կովկասի փոխարքայի այստեղ գալու օրից նրա ոյժերը զգալի չափով աւելացան։ Ախորժակը ու քունը լաւացան։ Մարմնի տաքութիւնը առաւօտները նորմալ է, իսկ երեկոները թէև փոքր ինչ բարձրանում է, բայց դա էլ հետզհետէ կանոնաւորվում է։ Շնչառութիւնը ազատ է. սրտի գործունէութիւնը ամբողջ ժամանակ բաւարար է»։

◆ Թիֆլիսում հակաթոքախտային ցուցահանդէսի բացման օրը հեռագիրներ ուղարկվեցին—Բաթում՝ Կովկասի փոխարքային և Պետերբուրգ՝ բժ. Բլիւմէնտալին։ Այժմ յիշեալ երկու անձերից ստացվել են շնորհակալական հեռագիրներ Թոքախտի դէմ Մաքառող Կովկասեան Ընկերութեան նախագահուհի իշխանուհի Մ. Թումանեանի անունով։

◆ Թիֆլիսի պոստ-հեռագրական շրջանի կառավարիչը խնդրում է Զատկի առիթով շնորհաւորական հեռագիրները յանձնել հեռագրական գրասենեակին վաղօրօք, որպէս զի հնար լինի այդպիսիները տեղ հասցնել Զատկի առաջին օրը։

◆ Ապրիլի 8-ին Ռազմավիրական ճանապարհով Թիֆլիս հասաւ երկրագործութեան դեպարտամենտի գլխաւոր կառավարիչ ստատս-սեկրէտար Ա. Ի. Կրիվօշէինը։ Երէկ Կրիվօշէինը երեկոյեան մեկնեց Բորժոմ և Աբասթուման, իսկ վաղը այնտեղից կը մեկնէ Բաթում։ Վերադառնալով ապրիլի 13-ին Թիֆլիս, Կրիվօշէինը ապրիլի 14-ի երեկոյեան մեկնելու է Մուղանի դաշտը։

◆ Զատկական առաջիկայ տօների առիթով ոստիկանապետը կարգադրել է ոստիկանական պաշտօնեաներին խստացնել հսկողութիւնը մթերքները թանգ գներով վաճառողների, մանաւանդ միջնորդ վաշխառուների վրայ։

◆ Վաղվանից մինչև ապրիլի 15-ը Թիֆլիսի բոլոր կլուբները կը փակվեն։

◆ Մարտ ամսում Թիֆլիսում հիւանդութեան ամենամեծ տոկոսը տուեց երեխաների կարմրուկ հիւանդութիւնը։

◆ Քաղաքային ծննդաբերական ապաստարանի նոր շինութեան առաջին յարկը արդէն պատրաստ է։ Հաւանօրէն երկրորդ յարկը կը կառուցվի մինչև այս տարվայ սեպտեմբեր կամ հոկտեմբեր ամիսը։

◆ Թոյլատրված է վիճակախաղ սարքել Հայուհեաց Որբախնամ և Կ. Հ. Բ. Ընկերութիւններին ապրիլի 16-ին և 21-ին։

◆ Արտիստական Ընկերութեան անդամների ընդհանուր ժողովի մէջ, որ կայացաւ Ե. Դօլուխանեանի նախագահութեամբ ապ. 6-ին, երևաց, որ 1912 թ. եղել է հասոյթ 89,486 ր. 5 կ.—լօտօյից, թղթախաղից, հիւրերից, ընտ. երեկոյթներից, մշտական այցելուներից և այլն։ Ընդհանուր ծախք՝ 79,812 ր. 93 կ.։

◆ Կիրակի, ապրիլի 7-ին, տեղի ունեցաւ Թիֆլիսի 2-րդ Փոխադարձ Վարկի Ընկերութեան անդամների ընդհանուր ժողովը քաղաքագլուխ Ալ. Խատիսեանի նախագահութեամբ։ Հաստատվեց տարեկան հաշիւը, որից երևում է, որ առ 1 յունվարի 1913 թ. ընկերութիւնը ունէր 1830 անդամ 353,780 ր. շրջանային դրամագլխով։ Զուտ օգուտ մնացել է 11,979 ր. 36 կ., որով ամէն մի 100 ր. անդամակցութեան վճարը կը ստանայ 4 ր. դիվիդէնդ։ 1913 թ. նախահաշիւը կազմում է 34,050 ր., որի մէջ վարչութեան անդամներից իւրաքանչիւրի ռոճիկը աւելացված է 600 րուբլով։ Առանձին առաջարկութեամբ ընդհանուր ժողովը որոշեց ծառայողներին պարգև տալ, իւրաքանչիւրին իր ռոճիկի $1^1/_2$ ամսականը։ Վերջում գաղտնի քուէարկութեամբ, համարեա միաձայն, ընկ. վերստուգիչ ընտրվեց Զ. Մամուլեանը։

◆ Կովկասի Հայոց Բարեգործական Ընկ. խորհուրդը խնդրում է տպել, որ ինքն շնորհակալութեամբ ստացել է զատկական տօների առիթով յօգուտ աղքատների Մնացական Խունունցից 10 ր.։

◆ Կիրակի, ապրիլի 21-ին, Թիֆլիսի Արտիստական Ընկ. ամառային այգում (Միքայէլեան փողոց) կայանալու է յօգուտ Կովկ. Հայոց Բար. Ընկ. մեծ զբօսանք։

ԳԻՏՈՒԹ., ԳՐԱԿԱՆ., ԳԵՂԱՐ.

ԳՐԱԿԱՆ-ԳԵՂԱԳԻՏԱԿԱՆ ՍԱԼՕՆՈՒՄ

Գրական մի շարք երեկոյթների թւում պակասում էր զուտ երաժշտական-քննադատական ճիւղը։ Սակայն Սալօնը գալիս է այժմ բաւարարութիւն տալու և այդ ճիւղով հետաքրքրվողներին։

Ուրբաթ, ամսիս 5-ին, հերթական երեկոյթը նուիրված էր ռուս երաժիշտներին։ Օր. Ս. Մելիք-Շահնազարեան ռուսաց լեզուով կարդաց մի զեկուցում, որով մի ընդհանուր ակնարկ գցեց ռուս օպերային-երաժշտական ճիւղի զարգացման վրա։ Ռուս երաժշտութիւնը,—ասում է դասախօսը,—սկսում է ինքնուրոյն կերպարանք ընդունել XVIII դարի երկրորդ կէսից, սակայն հիմնական և հաստատ հիմքերի վրա դրվում է միմիայն Գլինկայի ձեռքով. դասախօսը սրան համարեց հիմնադիր ռուս ազգային մելօդիական քնարի, որը մեծ ազդեցութիւն է ունեցել յետագայ երաժշտագէտների վրա։ Այնուհետև դեկլամասիօն օպերայի հիմնադիր երևան է գալիս Դարգօմիժսկին։ Սէրօվը, որ ազգային տենչերի արտայայտողը եղաւ, ձգտեց միաձուլել մելօդիական և դեկլամասիօն ոճը երաժշտութեան մէջ։

Անցեալ տարի 60-ական թւականները առաջ մղեցին նոր ուղղութիւն երաժշտական զարգացման մէջ Ռուսաստանում։ Այդպէս, օրինակ, Բալակիրօվի շրջանը կողմնակից հանդիսացաւ ազգային-ռէալական երաժշտութեան։ Ապա գալիս է Մուսօրսկին՝ իբրև նարօդնիկ-կոմպօզիտօր, Ռիմսկի-Կորսակօվը՝ ռուս հեքիաթական-օպերայի ստեղծագործողը՝ ազդված Վագներից։

Սակայն ռուսական օպերային երաժշտութիւնը ստանում է եւրօպական նշանակութիւն Ռուբինշտէյնի և մանաւանդ Չայկօվսկիի օրերով։ Սրանցից առաջինը՝ իբրև կօնսերվատօրիայի հիմնադիր՝ այդ օրից արդէն հնարաւորութիւն է ստեղծում կանոնաւոր երաժշտական կրթութիւն ստանալ Ռուսաստանում։ Ռուբինշտէյնի քնարի մէջ գերակշռում է մելօդիան՝ արդէն ներշնչված ընդհանուր եւրօպական երաժշտութեան հովերով։ Իբրև մեծագործ լիրիք ռուսական երաժշտութեան մէջ, կոմպօզիտօր-ինդիվիդուալ տրամադրութիւնների թարգման հանդիսանում է Չայկօվսկին։ Այնուհետև մի քանի խօսքով շօշափվեցին ռուս ժամանակակից երաժշտագէտները՝ Լեադով, Գլազունով, Լեապունով, որոնք զարկ տուին ռուս լիրիկայի ազգային քնարին։

Դասախօսութիւնից յետոյ տիկ. Մելիք-Ալլահվերդեանի նախագահութեամբ տեղի ունեցաւ մտքերի փոխանակութիւն։ Սակայն հանդիսականների մէջ, որոնց մեծամասնութիւնը կազմում էին ռուսներ, խօսողներ հանդէս եկան միայն երկու հոգի։

Սօլօվեան խօսելով դասախօսութեան մասին գտնում էր, որ դասախօսը շատ թռուցիկ կերպով է անցնում երաժշտական զարգացման մոմենտները։ Այդպէս՝ մինչև Գլինկա Ռուսաստանում իշխում էր իտալական երաժշտութիւնը. և ինչպիսի հանգամանքներ առաջ եկան, որ ստեղծեցին մի այդպիսի հսկայ երաժշտագէտ, ինչպիսին Գլինկան է. նոյնը միւսների վերաբերմամբ։ Այնուհետև խօսում է ազգային ոգու մասին երաժշտութեան մէջ։ Կանգ է առնում Սէրօվի ստեղծագործութիւնների վրա և համեմատում նրա «Рогнѣда» օպերան Գլինկայի «Жизнь за Царя»-ի հետ։

Սէրօվ,—ասում է Սօլօվեան,—յիշեալ օպերայում վերջացնում է ռուսական ժողովրդական եղանակները և դրանցից կազմում իր «Рогнѣда»-ն, մինչդեռ Գլինկան ստեղծագործում է ինքնուրոյն մօտիվներ. մարդը երկար ժամանակ ապրում է Լեհաստան միայն իր օպերայի մազուրկան ստեղծագործելու համար, և մենք տեսնում ենք յիրաւի ուժգին գործ։ Այնուհետև մատնանշում է առհասարակ, որ սպեցիֆիկ նացիոնալիզմի տենչը ոչ թէ մի առաւելութիւն է, այլ թուլացնող ֆակտոր է երաժշտութեան մէջ. և ռուսական երաժշտութիւնը մեծ քայլեր արաւ, երբ նա դուրս եկաւ ուղիղ ճանապարհի վրա և ընթացաւ եւրօպական երաժշտութեան գաղափարներով։ Չայկօվսկին մեծ ուժ դարձաւ շնորհիւ նրա, որ արտայայտեց ինդիվիդուալ փիլիսօփայական տենչեր. այնուհետև Սօլօվեան մատնանշում է Սկրիաբինին, որի դէմքը գրեթէ բացակայել էր դասախօսութեան մէջ. մինչդեռ Սկրիաբինը նոր հոսանքի ներկայացուցիչ է երաժշտութեան մէջ և արժանացել է խորին ուշադրութեան վերջին ժամանակներս։ Սկրիաբինը եզակի դէմք է ռուսաց երաժշտութեան մէջ, որ ձգտում է արուեստը դարձնել կօլլեկտիվ. այդ պատճառով Սկրիաբինի պրոբլէմը միայն էստետիկական չէ, այլ աւելի ընդհանուր կուլտուրական։ Նա շօշափում է երաժշտութեան մէջ գծեր, որ հետաքրքրում է համայն մարդկութեան։

Վերջացնելով իր խօսքը՝ Սօլօվեան ցանկութիւն է յայտնում, որ ապագայում դասախօսները կանգ առնեն մի որոշ դէմքի վրա և տան աւելի ցայտուն նկարագրութիւններ. և եթէ հնարաւոր է նոյն հեղինակի երկերից նուագվեն իսկոյն և եթ կտորներ և այդպիսով երաժշտական ծանօթութիւնը աւելի մատչելի դարձնեն։

Նախագահող տիկ. Մելիք-Ալլահվերդեան, որ մի ռուս երիտասարդ և պատրաստված հարուստ տեղեկութիւններով երաժշտական-քննադատ է, խօսելով Սօլօվեանի շօշափած կէտերի առիթով, համաձայնվում է բերված շատ կողմերի հետ, սակայն չէշտում է, որ Սէրօվի «Рогнѣда»-ն ճիշդ որ մեծ գործ չէ ներկայացնում, բայց Սէրօվը աւելի ուժեղ արտայայտվել է «Յուդիթ» (Юдиѳь) օպերայում, յայտնի է և «Вражья сила»-ն. «Յուդիթի» մէջ արտայայտվում է երաժշտական մտապատկերների խորութիւն։ Համաձայն է այն մտքի հետ, որ ցանկալի էր առաջիկայում ուրոյն-ուրոյն երաժշտական դէմքերի վրա կանգ առնել։ Քննադատը նոյնպէս չէ ընդունում երաժշտութեան մէջ նացիոնալիստականութիւն։

Առհասարակ տիկինը թողնում է լաւ տպաւորութիւն իր լուսաբանութիւնների մէջ։

Վերջում տիկ. Ախվերդօվա երգեց Բորօդինայի «Мнѣ снилось вечернее небо». տիկինը երգում է շնորհքով և տեմպերամենտով։ Կօվալեվսկայան երգեց Դէնցից։ Սօլովիեվա Դարգօմիժսկիի «Русалка»-ից «Какъ у насъ на улицѣ» կտորը, Վլասօվը Ռիմսկի-Կորսակօվի «Садко» օպերայից «Пѣсня варяжескаго гостя». Բոլոր երգիչները կատարեցին իրանց կտորները շնորհքով և արժանացան բուռն ծափահարութիւնների։

Fis.

ԳԱՒԱՌԱԿԱՆ ԹԱՏՐՕՆ

Լագօդեխ, 5 ապրիլի

Մարտի 31-ի երեկոյեան տեղիս հայոց դպրոցի թատերասրահում ուս.-ուս. Բ. ք. Սուքիասեանի և վարժուհի՝ օր. Ար. Բաղդասարեանի նախաձեռնութեամբ կայացաւ երեկոյթ՝ մանկական ներկայացումով։

Երեկոյթը կազմված էր երկու մասից. առաջ խաղացին «Էս էլ քեզ հինգ ու խաչ» կատակերգութիւնը Գ. Աղաջանեանի. երկրորդ մասը ոտանաւորներից և խմբական երգեցողութիւնից էր բաղկացած։ Աշակերտները կենդանի և աշխոյժ խաղացին իրանց դերերը։ Ներկայացումից յետոյ՝ սկսվեց խմբական երգեցողութիւնը «Մեր հայրենիք» երգով, այնուհետև արտասանվեցին թէ ռուսերէն և թէ հայերէն ոտանաւորներ, երգերի ներդաշնակ ընդմիջումներով։ Թառի նուագածութեամբ աշակերտուհի Ն. Յովհաննիսեանը սօլօ երգեց «Ծիծեռնակ», իսկ Լ. Մայիլեանը և Ս. Դաւթեանը երգեցին «Ես լսեցի»։ Երեկոյթը ընդհանրապէս անցաւ կենդանի։ Վերջը թառի նուագածութեամբ պարեցին ասիական պարեր։ Ժողովուրդը իր գոհունակութիւնը յայտնեց երեկոյթը կազմակերպողներին։ Մուտքը նշանակված էր 25 կ. յօգուտ դպրոցի չքաւոր աշ.-աշակերտուհիների Զատկի տօներին հանդերձներ գնելու։

Նորեկ

Գանձակ, 2 ապրիլի

Կիրակի, մարտի 31-ին, Գանձակի ժողովարանի դահլիճում Հայ Ուսուցչական Միութեան Գանձակի ճիւղի օգտին, քաղաքիս ս. Յովհաննէս եկ.-ծխ. դպրոցի երգեցողութեան ուսուցիչ Արմենակ Գրիգորեանը տուեց 50 հոգուց բաղկացած խմբի երգեցողութեամբ համերգ։

Խումբը երգում էր աջող։ Աչքի էր ընկնում ծխ. դպրոցի 6-րդ բաժ. աշակերտուհի օր. Մ. Գրիգորեանը «Մանիր, մանիր, իմ ճախարակ» և «Պարզիր աղբիւր» պատկերները ներկայացնելիս։ Համեմատած տարիքին՝ օրիորդը իսկական դերասանուհու տիպ էր ներկայացնում։ Հասարակութիւնը օրիորդին վարձատրեց երկար ծափահարութեամբ։ Լաւ տպաւորութիւն թողեցին և խմբապետ Գրիգորեանի «Ты придешь моя заря» («Жизнь за Царя») և Արտէմ Տէր-Պօղոսեանի «Ամէն հայր սուրբի» սօլօները։

Համերգը վերջացաւ ժամը 12-ին «Բամբ որոտանի» ուժգին արձագանքներով և հասարակութեան ծափահարութիւնների որոտումներով։

Այնուհետև եղան պարեր զինւորական երաժշտախմբի նուագածութեամբ. պարերը տևեցին մինչև ժամը 2-ը։

Համերգին դաշնամուրի վրա նուագակցում էր օր. Մ. Թէմուրեանը։

Գանձակեցի

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Թիֆլիս, 9 ապրիլի

Թիֆլիսի Հայոց Երաժշտական Ընկ. Վարչութիւնը շնորհակալութեամբ ստացել է իր երաժշտական գրադարանի համար հետևեալ աշխատութիւնները. 1) Ռոմանոս Մելիքեանից «Երկու երգ» Op. II. ա) «Ուռենի» և բ) «Անձրևում», 2) Սարգիս Բարխուդարեանից «Արևելեան պարեր» Op. I., 3) Ի. Ե. Պօպօվից «Հայկական Երաժշտութիւն» վերնագիրը կրող ռուսերէն ուսումնասիրութիւնը և 4) Ռ. Գ.-ից տառերի գիւտի 1500-ամեակի և տպագրութեան 400-ամեակի առիթով յօբելեանական շարականները քառաձայն խմբի համար գրված։

Վարչութիւնս միաժամանակ յուսով է, որ մեր բոլոր երաժիշտները և երաժշտագէտները օր առաջ կաշխատեն ուղարկել իրանց աշխատութիւնները Ընկերութեանս գրադարանը ճոխացնելու և հայ երաժշտութեան ապագայ պատմագրի համար անհրաժեշտ նիւթեր մատակարարելու։ Վարչութեանս հասցէն՝ Евангуловская, 8, кв. Ю. И. Спендіаровой.

Վարչութիւն

Բագու, 4 ապրիլի

Գործակալ տ. բ. Գեղամեանի «Մշակի» № 71-ում տպագրված նամակից երևում է, որ իբր թէ ես եմ «գործակալ քննիչ քահանային դատարանի դուռը ցոյց տալիս»։

Բարօվին մօտ չունեմ և առիթ էլ չը կայ Գեղամեան քահանային դատարան հրաւիրելու։ Ես ծանօթ չեմ դատարանի շէնքին և սիրած գործս էլ չէ։ Ես միայն գրել եմ ի գիտութիւն հասարակութեան այն, ինչ լսել եմ հ. քննիչի յայտնի գործի նկատմամբ. ասել եմ թէ՝ Տէր-Գրիգորեանը դժգոհ է մնացել Գեղամեան քահանայի կատարած քննութիւնից և բողոքելով դատախազի միջոցով նրան դատի է ենթարկել տալու։ Ահա այդ ճիշդ իրողութիւնը—օրիորդաց դպրոցի ուսուցիչների և գործակալի միջև եղած կռիւը—պատմողին Եղիշէ քահանան դատի է հրաւիրում ասելով. «Շուտով մենք միմեանց հետ կը տեսնվենք դատարանում»։

Ի զուր է տէր հայրը աշխատում ընթերցողներին համոզել, թէ «հակառակ իմ ցանկութեանը՝ ընդունում եմ գիմնազիայի ուսուցչի հրաւէրը»։ Ընդհակառակը՝ ես կասեմ, դատարան հրաւիրելը տէր հօր միակ ցանկութիւնն է եղել, ապա թէ ոչ՝ նա կը բարեհաճէր թերթի խմբագրութեանը գրել իր վրա բարդված մեղադրանքի անհիմն լինելը։ Բայց ոչ, նա հ. Դեմուրի միջոցով պատուիրում է, որ յետ վերցնեմ խօսքերս, թէ չէ՝ ութ ամիս բանտ նստեցնել կը տայ։ Ի հարկէ, ես իրաւունք չունէի ասելու՝ թէ չեմ ուզում հ. Գեղամեանի հետ դատարանում խօսել, դատել ու դատվել չեմ սիրում, ուստի յայտնեցի իմ տան հասցէն։

Գեղամեան քահանան նամակի սկզբում և վերջում ցանկութիւն է յայտնում «դպրոցի փտած հարցի մասին չը խօսել և մինչև դատարանի վճիռը՝ այս հարցը փակված տեսնել լրագրութեան մէջ»։ Ինչու համար, չեմ հասկանում, չեմ կարող այդ մտքի հետ հաշտվել։ Եթէ ուսուցիչները իրանց կռիւը հրապարակ չը հանէին, խնդիրն դպրոցի պատերի մէջ, ես ոչինչ չէի ունենայ ասելու, բայց երբ հրապարակ են հանել, հասարակութեան խօսակցութեան նիւթ է դարձել, ինչու պէտք է աշխատել ծածկել և չը խօսել թէ ովքեր են մեր նոր սերունդի դաստիարակները։ Գոնէ ինձ համար տարօրինակ է թւում այն վերաբերումը, որ դպրոցում լուրջ բնաւորութիւն ունեցող հարց է ծագել, եղել են զրպարտող և զրպարտվող կողմեր, և մինչև այսօր նրանք շարունակում են իրանց դաստիարակչական գործը օրիորդաց դպրոցում։

Պարտք եմ համարում հպատակվել պետական օրէնքի առաջ, ընդունել Աւետարանի աշակերտի հրաւէրը և գնալ այնտեղ, ուր Գեղամեան քահանան ցոյց կը տայ։

Իսկ մինչև դատարանի վճիռը՝ ցանկալի է լսել նրանց, որոնց սրտին մօտ է մանուկ սերունդի դաստիարակութեան գործը, ինչպէս և դպրոցի խնամատարների կարծիքը՝ այդ խնդրի առիթով։

Ա. Բարութ.

Պետիգօրսկ, 23 մարտի

Ահա քանի տարի է Կ. Հ. Բ. Ընկ. տեղիս ճիւղի վարչութեան մտահոգութեան առարկան է «Հայ ուսուցիչների և գրագէտների» սանատօրիա ունենալը։

Անվիճելի են այն բոլոր բուժական, կենսական անհրաժեշտութիւն ունեցող առաւելութիւնները, որոնք հիմք են ծառայել այստեղ սանատօրիա ունենալու հարցում։

Հայ ուսուցչութիւնը, քիչ բացառութեամբ, անտարբեր գտնվեց դէպի վարչութեան նախանցեալ տարվայ հրատարակած և առանձնապէս դպրոցական վարչութիւններին ուղարկած կոչի հանդէպ։

Տայ Աստուած, որ հայ ուսուցչութիւնը և հայ գրականագէտը հանքային ջրերի օգնութեան կարիքը չը զգան. բայց միթէ պայմանները, որոնց մէջ նրանք անց են կացնում իրանց կեանքը, հնար կը տան ազատ լինել ոսկրացաւերից, ջղային քայքայումներից և այն բոլոր հիւանդութիւններից, որոնցից սարսափում, բայց և անխուսափելիօրէն բռնվում են։ Հիւանդները իրանց ցաւով են մոլորվում, իսկ առողջները, իբրև ուսուցիչներ, տարված՝ օրվայ զբաղմունքով, վաղվան հիւանդագին օրը չեն երազում, և հետևանքը՝ հրապարակի վրա կայ անտարբերութիւնը դէպի այդ կարևոր հիմնարկութեան խնդիրը։

Այնու ամենայնիւ այս համակրելի գործին նախաձեռնող վարչութիւնը չի լքվում. և եթէ Ընկ. միւս ճիւղերը, նոյնիսկ կենտրոնը խօսքից գործի չեն անցնում և միայն ու միայն խրախուսում, ոգևորում են Ընկերութեան տեղիս ճիւղի վարչութեան ամէն դիմումներին, ասում ենք՝ չը նայելով այդ բոլոր հանգամանքներին, արդէն այդ նպատակով տնտեսել և տնտեսում է գումար։

Առաջին արձագանք տուողը եղաւ Մ. Բուդաղեանը, որ 1000 ր. նուիրելով այդ նպատակին՝ ցանկութիւն է յայտնել, որ կարիքի դէպքում մի մահճակալ դրվի իրանց միջոցներով պահվող Սաղեանի դպրոցի ուսուցիչների համար։

Հայ ունևորների, ուսուցիչների, գրականագէտների և զանազան, մանաւանդ բարեգործական հաստատութիւնների ուշադրութիւնն ենք հրաւիրում այդ խնդրի վրա։

Անցած տարին Կ. Հ. Բար. Ընկ. տեղիս ճիւղի վարչութիւնը պատրաստել էր ամբողջ ամառվայ (երեք ամսվայ) համար ձրի հանրակացարան, ուր կարող էին օգտվել միևնոյն ժամանակում 4 անձն։ Բժշկական շրջանը ընդունելով ըստ վաննաների թւի 30 օր, ուրեմն կարող էին երեք ամսում օգտվել 10—12 անձն։ Մի քանիսը հնար չունեցան գալ, մի քանիսը միջոց չունէին, մի քանիսի հիւանդութիւնը, ինչպէս օր. թոքախտը, այստեղ չէր կարող բուժվել, և որոշեցին չը գալ։ Օգտվեցին միայն 4 ուսուցիչ-ուսուցչուհիներ։

Այս տարի ևս, վարչութիւնը իր՝ ամսիս 20-ի նիստում որոշել է հանրակացարան պահել 6 մահճակալով։

Առաջարկում եմ օգտվել ցանկացող ուսուցիչներին ըստ կարելւոյն շուտ ուղարկել տեղիս վարչութեանը հետևեալ կարևոր թղթերը. 1) վկայական, որ նա ուսուցիչ է այս-ինչ դպրոցում, որը վաւերացնում է հոգաբարձութիւնը ստորագրութեամբ և դպրոցական կնիքով և 2) բժշկի վկայական, որ անհրաժեշտ է հանքային ջրերի բժշկութիւնը։

Կը տրվի ձրի սենեակ, ծառայ, վաննաներ, ինքնաեռ և բժշկական խորհուրդներ։

Թղթերը ուղարկել կարող են Կովկասի Հ. Բարեգործ. Ընկերութեան Պետիգօրսկի ճիւղի վարչութեան հասցէով։

Վարչութեան անդամ-քարտուղար
Մել. Մարգարեան

Մեղրի, 2 ապրիլի

Այս ապրիլի 20-ին Մեղրիում տօնվելու է Մեղրիի եկ.-ծխ. 6-ամեայ դպրոցի ուսուցիչ Գէորգ Խարմանեանի մանկավարժական գործունէութեան 25-ամեակը. այդ նպատակով ընտրված յօբելեանական կարգադիր յանձնաժողովը, յայտնելով այդ մասին, դիմում և խնդրում է հասարակութեանը՝ իբրև կրթական համեստ մշակի բազմամեայ գործը գնահատող՝ մասնակցել այդ հանդէսին և խրախուս ու քաջալեր հանդիսանալ արդիւնաւոր ուսուցչին ըստ հայ հասարակութեան անդամների բարի ցանկութեան՝ նիւթական օժանդակութեամբ, շնորհաւորանքներով և կամ ներկայացուցչով։

Յօբելեանական կարգադիր յանձնաժողովի նախագահ և հոգաբարձութեան ներկայացուցիչ Յովակիմ Մալումեանց
Անդամ-քարտուղար՝ Յովհ. Նիկողոսեանց

ՀԱՅ ԳՐՈՂՆԵՐԻ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ

(Նամակ խմբագրութեան)

Ելակէտ ընդունելով այն, որ ամէն մի ընկերութիւն որոշ մասնաւոր նպատակ պիտի ունենայ և ձգտի այդ նպատակը համակրողներին իր շուրջը համախմբել, և որ անմիջապէս նպատակին չը վերաբերող խնդիրներով չը պիտի զբաղվի, իր ոյժերը ջլատի, գալիս ենք նկատելու, որ Հայ Գրողներ Ընկերութիւնը հիմնվեց, այն էլ հայկական գրեթէ բոլոր ընկերութիւնների ներկայացուցիչների որոշմամբ, յատկապէս գրական ֆոնդ հաստատելու, գրողներին փոխադարձ օգնութիւն հասցնելու. այս պատճառով և գծագրվեց ի մի խմբել գրչի բոլոր մշակներին, առանց ի նկատի ունենալու նրանց ուղղութիւնը, տեսակը, որովհետև փոխադարձ օգնութեան գաղափարը կարող է բարոյական պարտք դնել ամէն մի գրողի վրա թէ ընկեր գրողին օգնելու և թէ ընդհանրապէս գրողի պատիւը պահպանելու համար իր լուման մտցնել։ Եւ եթէ մեր այս Ընկերութիւնը իր բուն նպատակից չը հեռանայ, կողմնակի բաներով չը զբաղվի, կատարելապէս կը հասնի նպատակին։

Ընկերութիւնը այժմ ունի մօտ 150 անդամ, հետևապէս և տարեկան կարող է գանձել 750 րուբլի անդամավճար, առանց ուրէք նպաստ խնդրելու։ Եւ որովհետև այսպիսի մի նպաստի բաշխումը մեծ աշխատանք, գործավար, գրասենեակ և այլն չէ պահանջում, այդ պատճառով և կարելի է այդ ամբողջ գումարն էլ իբր նպաստ բաժանել ընկեր-գրողներին, կրկնում եմ, առանց նպաստներ խնդրելու։ Մինչդեռ Հայ Գրողների Ընկերութեան այժմեան վարչութիւնը մի այդչափ—800 ր.—նպաստ տալու նպատակով 4200 րուբլու նախահաշիւ է կազմել, որի մէջ 3000 րուբլի հասարակութիւնից նպաստ է նշանակում, և այս անում է այն վարչութիւնը, որի նախագահը ի լուր աշխարհի յայտարարում է, թէ մենք դիմում չենք անելու։ Միթէ դիմում չէ, որ սպասում են հասարակութիւնից 3000 րուբլի նպաստ իրանց ընկերներին նիւթապէս օգնելու համար, մինչդեռ իրանք տալիս են միայն 500 ր., (և կամ 750 ր.) և դեռ չեն էլ քաշվում ընկեր-գրողի անունով հաւաքած կօպէկներից 500 ր. կահ-կարասիքի, 360 ր. գործավարի, 300 ր. գրասենեակի և 200 ր. գրասենեակային ծախսերի յատկացնել, ուրեմն 1360 ր. ի զուր ծախսել, ինչ է՝ 800 ր. նպաստ պիտի տան։

Այս Ընկերութեան փոխատու գանձարանը հիմնված է այնպիսի խիստ կանոնների վրա, որոնց բաւարարութիւն տուող գրողն ամենայն հեշտութեամբ կարող է դրամ փոխ առնել և մանր վարկի հաստատութիւններից, իսկ եթէ փոքր ինչ աւելի մեղմ վերաբերվեն, կարճ միջոցում գանձած գումարը կը կորցնեն։

Ուրեմն իմ խղճը, իբրև այդ Ընկերութեան հիմնադիրներից մինի, ինչքան որ ըմբռնել եմ ինձ ընտրողների որոշումը, եղել է և է, որ ներկայ Հայ Գրողների Ընկերութիւնը լինի սոսկ փոխադարձ օգնութեան, գրական ֆոնդի ընկերութիւն. ամէն մի գրչի մշակ, գիտնական թէ գեղագրագէտ, հրապարակախօս թէ հնագէտ միմեանց փոխադարձ օգնութեան գաղափարով և առանց ծանրանալու հասարակութեան վրա, առանց էապէս նպաստ խնդրելու և առանց աւելորդ ծախսեր անելու՝ օգնեն միմեանց։

Այս այսպէս. բայց կայ մի ուրիշ կարիք ևս, որ դժբաղդաբար այս Ընկերութեան միջոցով ևս չէշտվում է. դա գեղարուեստական գրողների ընկերութեան պակասութիւնն է, մի ընկերութիւն, որ շատ վաղուց պէտք է հիմնված լինէր։ Մենք ունենք Ազգագրական, Դրամատիկական, Երաժշտական, Գիւղատնտեսական և Տնայնագործական Ընկերութիւններ, ունենք այդ մասնագիտութիւններին վերաբերեալ պարբերական թերթեր, սակայն չունենք մի զուտ բելլետրիստական ամսաթերթ և ընկերութիւն։ Հարկաւոր է, որ կազմվի մի նոր ընկերութիւն ևս, զուտ գեղագիտական, համախմբելով մեր վիպասաններին և բանաստեղծներին, որը ունենայ իր գեղագիտական ամսագիրը, իր բելլետրիստական գրադարանը, իր գեղեցիկ դպրութեան վերաբերեալ դասախօսութիւնները, թէ չէ՝ խեղդելով Գրողների Ընկերութիւնը, դնել հնագէտին բանաստեղծի, Ա. Իսահակեանին քիւրդերի, Սայաթ-Նովայի երգերը Արասխանեանի թարգմանած Կարլ Մարքսի «Կապիտալի» կողքին՝ կը գտնայ աճապաղդալ, և հետզհետէ կը վանէ գիտակից ոյժերը և ինքն էլ դեռափթիթ կը թառամի։

Ե. Լալայեան

ՀԱՅ ՎԱՐԺԱՐԱՆՆԵՐՈՒ ՄԵԾԱՅԱՐԳ ՈՒՍՈՒՑՉԱԿԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐՈՒՆ ԵՒ ՈՐԲԱՍԷՐ ՈՒՍԱՆՈՂՆԵՐՈՒՆ ՈՒՂՂԵԱԼ

Սեբաստիոյ Ազգ. Որբանոցի ուսուցչական ժողովը, իր 1912 հոկտ. 29/11 նոյեմբ. թուակիր հետևեալ կրկնակ շրջաբերական գրութիւններով, դիմում ըրաւ կարգ մը հայ վարժարաններու պատ. տեսչութեանց, մեծայարգ ուսուցչ. մարմիններու և որբասէր ուսանողներու։

⁂

Յարգելի պաշտօնակիցներ.

Դուք, որ ձեր բովանդակ կեանքը նուիրած էք ապագայ սերունդի լուսաւորութեան սուրբ գործին, դուք միայն կրնաք ամենէն աւելի գնահատել մեր ձեռնարկն, որուն նպատակն ուղղուած է հոն, ուր կը յառին ձեր լուսաւոր աչքերը։

Ապրեցնել նոր սերունդը, տալով անոր ֆիզիքական և բարոյական առողջ դաստիարակութիւն. ապրեցնել նոր սերունդն ամեն գնով՝ օժտելով զայն անհրկուն նկարագրով։ Ահա ինչ որ միակ պահանջն է ներկայ դժբաղդ ժամանակին և արցունքի ու արիւնի, ցաւերու և վշտերու մէջ տուայտող դժբաղդ ազգին գոյութեան։ Այս անգամ, սակայն, ձեզ դիմողները՝ այդ որբ ու դժբաղդ ազգին անտէրունչ որբերն են, որոնք արտասուալից աչքերով գթութի՜ւն և օգնութի՜ւն կաղաղակեն։ Արդ, մարած օջախներու աւկայծեալ այդ վերջին կայծերուն՝ որբերուն դաստիարակութեան պատասխանատուութիւնը մեզ յանձնուած ըլլալով՝ ուսուցչական ժողովս որոշեց դիմել ձեզ, քսան և հինգ տարուան արդիւնալից մարդասիրական հաստատութիւն մը օժտելու համար՝ I) մատենադարանով մը, II) գիտական գործիքներու թանգարանով մը, III) գործնական երաժշտութեան գեղարուեստական բաժինով մը (ջութակ և դաշնակ), IV) եթէ հնար է՝ նոյն իսկ արհեստանոցով մը։

Վստահ ենք, թէ դուք ևս չպիտի խնայէք ձեր թանկագին ժամանակութիւնն ու մասնակցութիւնը՝ յորդորելով ձեր աշակերտութիւնն առնուազն 10—40 փարա և առաւելն 1—5 ղրշ. զոհողութիւն մը ընելու համար՝ իրենց որբ եղբայրներուն։ Քաջայայտ է ձեզ, յարգելի պաշտօնակիցներ, թէ այս պարագան՝ ոչ միայն շարժառիթը պիտի լինի ներկայ ուսանողութեան մէջ արթնցնելու զոհողութեան ոգին, այլ նաև ոչ նուազ պիտի նպաստէ անոնց բարոյական մաքուր նկարագրի կազմութեան. այլ նաև՝ բարեգործութեան այս լաւագոյն առիթով անոնք պիտի հակին դէպի առաքինութիւն։ Ամէն դասո՝ 1—5 ղրուշով, նոյն իսկ 10 փարայի չնչին զոհողութեամբ մը, իւրաքանչիւր անհատ մխիթարութիւն պիտի ունենայ տեսնելու մարդասիրական գեղեցիկ հաստատութիւն մը՝ օժտուած իր մասնաւոր մատենադարանով, թանգարանով և գեղարուեստական թէ արհեստական կրկնակ բաժիններով, որով նաև հաստատուն հիմերու վրայ պիտի դրուի վառաբաղդիկ որբութեան ապագան։ Հանգանակութեանց արդիւնքը մանրամասնօրէն պիտի հրատարակուի հայ թերթերու մէջ։ Ձեր հանգանակած գումարները հաճեցէք ղրկել՝ Որբանոցի խնամակալութեան ատենապետ տիար Յովհաննէս Անդրէասեանի հասցէին՝ ի Սեբաստիա։

Ցանուն անժառանգ որբերու կոչում կընենք ձեր բարեսիրական զգացումներուն, յարգելի պաշտօնակիցներ. և վստահ ըլլալով՝ թէ սոյն մարդասիրական ու կրթական ձեռնարկին համար չպիտի խնայէք ձեր բոլորանուէր ջանքերը, կը մատուցանենք ձեզ՝ մեր և ծաղկատի որբերուն կանխայայտ շնորհակալիքն ու երախտագիտական յարգանքը։

Դիւան Ուս. Մարմնոյ Ազգ. Որբանոց Սեբ.
Տեսուչ՝ Կոստեան
Ատենադպիր՝ Ն. Տէր-Գաբրիէլեան
1912 հոկտ. 29/11 նոյեմ.
Սեբաստիա

⁂

Այս նամակին հետ ներփակ ղրկուած է որբասէր ուսանողներու ուղղեալ յետագայ կոչը։

Ուսումնատենչ պարոններ,

Տեղւոյս Ազգ. Որբանոցը՝ հաստատութիւն մըն է բարենպատակ, որ հիմնուած է 1887-ին, չորս ու կէս ղրշ. սկզբնական չնչին դրամագլխով։ Հոն՝ այդ հաստատութեան գթոտ ու գուրգուրոտ գրկին մէջ կուգան ազգին անհայր, անմայր խե՜ղճ զաւակները պատսպարուելու, կրթուելու և նիւթական թէ բարոյական շնորհներ վայելելու համար առատապէս։ Առկայծ ընտանիքներու այդ պլպլուն կայծեր՝ որբերը շնորհիւ Որբանոցի լուսաւոր ջահերն եղած են իրենց մարելու վրայ եղող օջախները փայլեցնող ու քանդուելու դատապարտուած իրենց տուները վերաշինող։ Այդ պատուական հաստատութիւնը կառավարուած է ցարդ հայ ժողովուրդին բարեսէր ու կրթանուէր յարգելի անհատներուն առատ նուէրներովը, ու քսան և հինգ տարուան բեղուն ու օգտակար շրջան մը ունեցած է ան, տալով ազգին՝ անչափ զոհողութիւններուն փոխարէն՝ 120 ընթացաւարտ և 200-է աւելի թերաւարտ արհեստաւոր երիտասարդներ, որոնք զանազան ասպարէզներու մէջ պատուաւոր ու յաջող դիրքեր գրաւած են, պատիւը հանդիսանալով իրենց ծնունդ տուող հայ ազգին և իրենց վրայ հայրական գորովով գուրգուրացող Որբանոցին։

Այս նոր տարեշրջանին, ուսուցչութիւնս, Որբանոց-Դպրոցի ուսանողութեան աւելի օգտակար ըլլալու նպատակաւ, խորհուրդը յղացաւ I) Հաստատել բնագիտական գործիքներու թանգարան մը, II) ճոխացնել ասկէ հինգ տարի առաջ լոկ ուսուցչական ձեռնարկով հիմնուած գրադարանը, III) աւելցնել գործնական երաժշտութեան բաժին մը (դաշնակ և ջութակ եւրոպական ձայնագրութեամբ)։

Ուսուցչութիւնս, նկատելով որ Որբանոցի մատակարարական ծանր բեռն արդէն իսկ բաւականաչափ ճնշած է խնամակալութեան ուսերուն վրայ, որոշեց խնամակալութենէն անկախաբար ի կատար հանել այս օգտակար ձեռնարկը՝ դիմումներ ընելով բոլոր հայ դպրոցներու որբասէր և ուսումնատենչ ուսանողութեան։ Ահաւասիկ, ուրեմն, սիրելի պարոններ, նոյն այդ պատուական հաստատութեան անունով է, որ ձեզ կը դիմենք, փափաքելով որ ձեր տասնոցները չխնայէք «այրի կնոջ» լումաներովը կառավարուող ու այնչափ ալ օգտակար հանդիսացող այդ հաստատութեան որբ ու անտէր ձեր ազգարիկներուն յառաջդիմութեանը սատարող այս ձեռնարկին յաջողութեանը համար։ Ձեր փոքրիկ նուէրները, վստահ ենք թէ, զմեզ կարող պիտի ընեն գործադրելու մեր նպատակը, որ պիտի ուրախացնէ և խնդացնէ ձեր սրտահատոր համատ որբ ընկերները։

Ու մենք, հաւաստի լինելով ձեր բարի կամեցողութեան ու զոհողութեան մասին, կուգանք այժմէն յայտնել մեր շնորհակալութիւնները, յղելով ձեզ երախտագիտական անկեղծ յարգանքը ձեր որբ ազգարիկներուն։

Դիւան Ուս. Ժողովոյ Ազգ. Որբ. Սեբաստ.
Տեսուչ՝ Խ. Կոստեան
Ատենադպիր՝ Ն. Տէր-Գաբրիէլեան
1912 հոկտ. 29/11 նոյեմբեր
Սեբաստիա

⁂

Ինչպէս այս երկու շրջաբերականներէն կը տեսնուի բացորոշ կերպով, Ազգ. Որբանոցի ուսուցչ. մարմնին նպատակն է. 1) հաստատելով ճոխ մատենադարան մը՝ հաղորդակցութեան մէջ դնել իր որբ սաներու մատաղ մտքերը հեղինակաւոր անձերու լուսափողփող մտքին և այս կերպով արթնցնել անոնց մէջ ընթերցասիրութեան ճաշակը, քննելու և կշռադատելու ուսումնասիրութեան ոգին, ինչպէս նաև ձգտումն ու մղումը՝ ինքնազարգացման ու ինքնօգնութեան, որոնցմով միայն պիտի առաջնորդուին անոնք գործնական կեանքի մէջ. 2) հաստատելով թանգարան մը՝ որբերուն տալ վերացականէ աւելի փորձառական ու առարկայական կրթութիւն. 3) հաստատելով գեղարուեստական ու արհեստական կրկնակ բաժիններ, օժտել զանոնք դրական ու գործնական կրթութեամբ, որուն այնքան պէտք ունին, ամենէն աւելի, ծնողական գուրգուրանքի բնական խրախուսանքէն զըրկուած այդ վառաբաղդիկ էակները՝ ազգին որբերը։

Որբանոցի Ուսուց. Մարմինը, գիտակ իր նպատակի վեհութեան և վստահ հայ կրթանուէր ուսուցիչներու ազնուական ու մարդասիրական վերաբերութեանը հանդէպ մեր սոյն հանրօգուտ ձեռնարկին, վստահ՝ ինչպէս նաև մատաղերամ հայ ուսանող սերունդի որբասիրական անարատ զգացումին՝ ունէ մէկ տեղէ առանց 5 փարանոց մը ստացած ըլլալու, անմիջապէս իր անձնական հրաշխաւորութեամբ 9 օսմ. ոսկի ծախսեց 11 ջութակի, գրակալներու և նօտայի տետրակներու համար։ Նաև երեք օսմ. ոսկի արժողութեամբ կարգ մը կարևոր և օգտակար գրքեր գնեց մատենադարանի համար։

Այսօր ուրախութեամբ կը ծանուցանենք, թէ Որբանոցի Ջութակահար խումբը գրեթէ աւարտեց «Louis Schubert»-ի ջութակի դասընթացքին առաջին գիրքը և յաջողութեամբ կը նուագէ զանազան եւրոպական եղանակներ, ինչպէս նաև նօտագրուած կարգ մը ազգային ժողովրդական երգեր։

Նաև ուրախութեամբ կը ծանուցանենք, թէ մեր դիմումներն անպատասխանի չմնացին։ Համակրանքով ընդունուեցաւ մեր ձեռնարկը յարգելի ուսուցչական մարմիններու և ազնիւ ուսանողներու կողմէ, որոնք փութացին գործնական և հոգիւին եղանակով ու քաջալերական նամակներով սրտապնդել զմեզ մեր սոյն ձեռնարկին մէջ։ Շնորհակալութեամբ արձանագրելով այս տողերը՝ յուսալից կը սպասենք, որ հետզհետէ հասնին մեզ մեր ընդհանուր դիմումներուն պատասխանները։ Փափագելի է, որ այն վարժարանները, որոնք չեն ստացած մեր շրջաբերականները, ներկայ հրատարակութիւնն իբր այն նկատելով՝ ընեն կարելին և ինչ որ հարկ է, որբութիւնը մխիթարող այս կարևոր ձեռնարկն ի գլուխ հանելու համար։ Այս անգամ, ինչպէս որ կանխաւ խոստացած էինք, կուտանք ցանկը միայն մի քանի տեղերու նուիրատուութեանց, ընդհանուր ցանկի հրատարակութիւնը՝ ամբողջանալուն վերապահելով։

Զարայի ազգ. վարժ.	71 ղրշ.	— փր.
Եւդոկիոյ » »	73 »	— »
Սանասարեան (Սեբաստիա)	184 »	30 »
Ադաբազարի ազգ. կեդր. վարժ. մանկճ. 1 օսմ. ոսկի	103 »	— »
Կահիրէի Գալուստեան երկսեռ վարժ. 10 անգլ. ոսկի	1120 »	— »
Մասնաւոր անհատներէ	103 »	— »
Համագումարը	1654 ղրշ.	30 փր.

Երախտագիտութեամբ այս փոքրիկ ցանկը հրատարակութեան տալէ վերջ, Կահիրէի Գալուստեան ազգ. երկսեռ վարժարանի պատկ. ուսուցչ. մարմնոյն կողմէ մեզ ղրկուած նամակը կը ներկայացնենք ստորև.

Յարգելի պաշտօնակիցներ,

Ձեր 1912 թ. հոկտ. 29/11 նոյեմբ. թուակիր նամակը, ներփակ ուսանողութեան ուղղուած կոչով մը, իր ժամանակին ստացուած է։

Դիւանս ներկայիւս կը փութայ ուրախութեամբ ծանուցանել ձեզ, թէ նպատակը՝ զոր կը հետապնդէք՝ համակրանօք ընդունուելով տեղւոյս ուսուցչական մարմնի կողմէ, տեսչութիւնը դիմում ըրաւ այդ մասին պատ. հոգաբարձութեան, որուն ոռոշմամբ Գալուստեան վարժարանի սաներն ամանորի առթիւ իրենց յատկացուած նուէրներէն սիրայօժար հրաժարելով ի նպաստ իրենց որբ եղբայրներուն, սոյն գումարը՝ 10 անգլ. ոսկի տեղւոյս ազգային առաջնորդարանի կողմէ ձեզի պիտի ղրկուի։

Ի գիտութիւն հաղորդելով ձեզ այս տեղեկութիւնը, կը բարևենք յարգանօք՝

Դիւան Ազգ. Գալուստեան վարժարանի ուսուցչական մարմնոյ՝
Ատենապետ՝ Մ. Ծալեան
Ատենադպիր՝ Խ. Տիրատուրեան
Կահիրէ, 24 փետր. 1913.

Այս նամակը հրատարակութեան յանձնելով, երբեք նպատակ չենք ունեցած գգուելու անձնասիրութիւնը Գալուստեան վարժարանի պատ. ուսուցչական մարմնոյն և պարտաճանաչ երկսեռ ազնիւ ուսանողութեան։ Բարերարներու և մարդասէրներու հոգեկան մեծութիւնն ու հրավառ զգացումներու վեհութիւնը յաճախ կը նսեմանայ և կը կիյնայ իր բարձրութենէն ու կը հալի շողոմարար լեզուներու կեղծիքին տակ։ Ներբող չի պահանջեր խղճի այն գերմնական երջանկութիւնը, որ յառաջ կուգայ պարտականութիւն մը կատարելէ, ինչ որ զգացած են և կը զգան միայն անոնք, որոնք ապրած են և կապրին աշխարհին մէջ իրենց պարտականութիւնը կատարելով։ Այդ երջանկութիւնը զգացին անշուշտ Գալուստեան վարժարանի պատ. ուսուցչական մարմինն ու երկսեռ ուսանողութիւնն, ինչպէս նաև ամեն անոնք, որոնց քով արձագանգ գտաւ վառաբաղդիկ որբութեան կողմէ մեր բրած կոչը, դաստիարակութեան շնորհիւ թշուառութեան ճիրաններէն ազատագրուած որբութեան ապագայ երջանիկ կեանքի մը հեռապատկերին առջև։ Այս մասին խօսք չունինք։ Միայն, եթէ մէջ բերինք այդ նամակը, պատճառը այս է. մենք գորովեցանք, և արդեօք ընթերցողն ալ մեզի հետ պիտի չգորովի՞ այդ հրեշտակատիպ մանուկներու—որոնց ծնողքը հայ ժողովուրդն է—մաքուր ու բիւրեղական զգացումը կարդալով սա տողին մէջ. «Գալուստեան վարժարանի սաներն ամանորի առթիւ իրենց յատկացուած նուէրներէն սիրայօժար հրաժարելով ի սէր իրենց որբ եղբայրներուն»։

Մենք կը կրկնենք միևնոյն խօսքը անոնց հայրերուն, այսինքն հայ ժողովուրդի բոլոր զաւակներուն. բժիշկ, հրապարակագիր, գրագէտ, բանաստեղծ, ուսուցիչ, հրատարակչական մարմին, վաճառական, արհեստաւոր, և այլն, և այլն, ամեն դասակարգի անձերու, անհատներու կամ ընկերութիւններու և այլ հաւաքական մարմիններու, երկրի թէ արտասահմանի մէջ գտնուող մեր բոլոր եղբայրներուն. «Ի սէ՜ր որբերուն փոքրիկ զոհողութիւն մը. օրինակը թող գայ վարէն, մեր փոքրիկ զաւակներէն՝ մեր փոքրիկ զաւակներուն համար»։ Ցանուն կրթութեան ոչինչ պէտք է խնայել, եթէ մանուկը կրնայ հրաժարիլ՝ իր ամանորի ամենագեղեցիկ հաճոյքներէն, ինչո՞ւ ուրեմն մենք ալ չհրաժարինք մեր բազմաթիւ և յաճախ աւելորդ ու ֆիզիքականը քանդող հաճոյքներէն. ո՜հ, ո՜րչափ արցունքներ պիտի սրբուէին, ո՜րչափ որբեր պիտի ապրէին և ո՜րչափ քանդուած տուներ պիտի վերաշինուէին։ Ի սէ՜ր որբերուն փոքրիկ զոհողութիւն մը՝ ուրեմն...

Ինչպէս կանխաւ ըսինք, այդ մարդասիրական զգացումը, իր սրտին մէջ տրոփող մանուկներու ծնողքը՝ հայ ժողովուրդն է, որուն կենսունակութեան և ապագայի մասին ջերմ հաւատացեալներն ըլլալով էր, որ մենք այս քայլն առինք ի սէր անժառանգ որբութեան և կը կրկնենք մեր կոչն այսօր հրապարակաւ, վստահ ըլլալով՝ որ այն արձագանգ պիտի գտնէ ժողովրդական աւելի լայն խաւերու մէջ։

Պէտք է ապրի նոր սերունդը, պէտք է ապրի որբութիւնը՝ ապագայ հայ կեանքի փիւնիկը, մի օր հայուն վերածնունդը պատրաստելու համար։ Պէտք է ապրի Սեբաստիոյ Որբանոցը, 25 տարուան՝ ամբողջ Սեբաստիոյ գաւառին մխիթարութիւնը դարձող այդ մարդասիրական հաստատութիւնը, հայկական տառապալից կեանքին մէջ ստեղծագործող ոյժ մը դառնալու համար։ Եւ հաստատութիւն մը, որ 4½ ղրուշ դրամագլխով սկսեր ու քառորդ դարու փայլուն շրջան մըն է բոլորեր, անշուշտ է թէ, ունի իրաւունք ապրելու։

Սոյդ է, թէ Որբանոցի ուսուցչական մարմինը իրեն նպատակ ունեցաւ միայն գրադարան մը, թանգարան մը, գեղարուեստական և արհեստական բաժիններ հաստատելու Որբանոցին մէջ, և այս նպատակաւ ան դիմում ըրաւ հայ վարժարաններու յարգելի ուսուցչական մարմիններուն ու ազգին ծաղիկ յոյսերուն, այսինքն՝ ուսանող մանուկներուն. սակայն, ո՜ւր էր թէ հայ մարդասէր Քարնէգի մը, բովանդակ Որբանոցի ապագան հաստատուն հիման վրայ դնէր պատկառելի կտակով մը կամ անմոռանալի բարեբարութեամբ մը յաւէտ երախտապարտ ձգելով ընտանեզուրկ, թշուառ որբութիւնը։ Մենք՝ հայուն բարոյական նկարագրին վրա վստահ՝ տակը ալ կը հաւատանք։

Տեսուչ Ազգ. Որբանոցի Սեբաստիոյ՝
Խ. Կոստեան

9 մարտ 1913, Սեբաստիա

ՕՐՎԱՅ ՆՈՐՈՒԹԻՒՆՆԵՐ

◆ Վիսբադէնի բժիշկների համագումարին գիտնական Բէրինգը զեկուցեց, որ նա գտել է նոր միջոցներ դիֆտերիտի դէմ։

◆ Ֆրանսիական հանրապետութեան Նախագահ Պուանկարէի մայրը յանկարծամահ լինելով, բոլոր պաշտօնական ընդունելութիւնները և հանդէսները վերացված են և Նախագահի ենթադրեալ ճանապարհորդութիւնը տեղի չի ունենայ։

◆ Մեծ պետութիւնները տեղեկացրին Բուլղարիային, որ նրանք վճռել են թոյլ չը տալ նրան արշաւել դէպի Կ. Պոլիս։

◆ Վիէննայում խօսում են, որ ապագայ Ալբանիան յայտարարվելու է աբսօլիւտ միապետութիւն։

◆ Սօֆիայից հեռագրում են, որ բոլոր դաշնակիցները նամակներ ուղարկեցին Նիկոլայ թագաւորին և խորհուրդ տուին զիջել Սկիւտարի հարցում։

◆ Պրինցուհի Լուիզայի և պրինց Կումբերլէնդի պսակադրութեանը ներկայ լինելու համար Պոտսդամ են մեկնելու Թագաւոր Կայսրը, անգլիական Թագաւոր Գէորգը, աւստրիական գահաժառանգ Ֆրանց-Ֆերդինանդը։ Կայսրին ուղեկցելու է արտաքին գործերի մինիստր Սազօնովը, Գէորգ թագաւորին՝ Գրէյը։ Նոյն տեղում վճռվելու է եւրօպական կօնգրէսի հարցը։

ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

(ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ՀԵՌ. ԳՈՐԾ.)

8 ապրիլի

ԲԱԳՈՒ։ Սուրախանում՝ Ասադուլաեվի նաւթահորից ֆօնտան խփեց, որ ամեն օր տալիս է 300,000 պուդ մաքուր նաւթ։

ԶԻԳՄԱՐԻՆԳԵՆ։ Պորտուգալական էկս-թագաւոր Մանուէլը նշանադրվեց պրինցուհի Աւգուստինա Վիկտորիայի հետ, որ իշխան Վիլհէլմ Հօհենցօլլէրնի միակ դուստրն է։

ՆՈՐ-ԲԱՅԱԶԷՏ։ Առաւօտեան ժամը 6½-ին զգացվեց երկրաշարժ։

ԿՈՊԵՆՀԱԳԵՆ։ Վախճանվեց յայտնի քանդակագործ պրոֆ. Վիսսէնը։

ԵԿԱՏԵՐԻՆՈՍԼԱՒ։ Երկու գնացքների ընդհարման ժամանակ թեթև վիրաւորվել են 15 ճանապարհորդ։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ։ Որոշված է մայիսի 5-ին գումարել արդիւնաբերութեան ու առևտրի ներկայացուցիչների համառուսական 7-րդ համագումարը, որ նուիրված կը լինի վաճառանիւթի, չը վճարումների դէմ մաքառելու և համաժողովրդական վիճակագրութեան հարցերին։

ԲԱԳՈՒ։ Փոխարքայի կարգադրութեամբ արգելված է նաւթահորերը ձեռքով փորելու սովորութիւնը՝ դրանով բանւորութեան զոհերի առաջն առնելու համար։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ։ «Свѣтъ»-ի խմբագիր Բաժենովը պատասխանատուութեան է ենթարկվում 1034-դ յօդուածով։ «Лучъ»-ի խմբագիր Նիկլիոնը, ինչպէս և «Р. Молва»-ի խմբագիր Լուչնիկովը ենթարկվեցին տուգանքի ամեն մինը 500 րուբլի։

ՄՕՍԿՎԱ։ Ենթարկվեցին տուգանքի «У. Россіи»-ն 500 ր. և «Р. Вѣд.» 300 ր.։

ՏՕԿԻՕ։ Զինական արևելեան երկաթուղու պատգամաւորները խնճոյք տուին ի պատիւ եաբոնական երկաթուղային աշխարհի ներկայացուցիչների։ Ռուսաց դեսպանը իր բաժակաճառը աւարտեց, ցանկանալով մերձեցում Ռուսաստանի և Եապոնիայի միջև տնտեսական շահերի հողի վրա։

ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆԸ ՅԱՅՏՆՈՒՄ Է

Բագու, Ալ. Բարութչեանին.—Ձեր նամակի ծրարի վրա մի երկու տող գրութիւն կար։ Յայտնեցէք, թէ ձեր ակնարկած գրութիւնը ե՞րբ է ուղարկվել մեզ։

Խմբագիր՝ ԱԼԷՔՍԱՆԴՐ ՔԱԼԱՆԹԱՐ
Հրատարակիչներ՝ Ա. ՔԱԼԱՆԹԱՐ
Ց. ՏԷՐ-ՄԱՐԿՈՍԵԱՆ
Հ. ԱՌԱՔԵԼԵԱՆ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Իմ մայրը սարսափելի կերպով տանջվում էր

Այս ձրի դեղատոմսը նրան բժշկեց։

Իմ մայրը խնդրել է ինձ յայտնել ի տեղեկութիւն ընդհանուրի այն փայլուն բուժման վերաբերեալ, որ նա ձեռք բերեց շնորհիւ այն ձրի դեղատոմսի, որ կտրել էր լրագիրներից։ Նա սարսափելի կերպով տառապում էր երկար ժամանակ։ Բժիշկները նրանում որոշել էին նէվրալգիա, նէֆրիտ և մի ամբողջ շարք հիւանդութիւններ։ Նա տանել չէր կարողանում իր գլխի ցաւերը, իսկ բոլոր դեղերը վատ ներգործութիւն էին անում նրա սրտի վրա։ Իր ցաւերի թեթեւութիւնը նա զգաց այն ժամանակ, հէնց որ սկսեց գործածել վերոյիշեալ միջոցը։ Դեղատոմսը հետևեալն է. մտէք մօտակայ դեղատունը կամ դեղավաճառանոցը և խնդրեցէք 60 գրան Կէֆալդօլ-Ստօր՝ 12 տաբլէտկաների մէջ։ Երկու տաբլէտկա ընդունելուց՝ իսկոյն թեթեւանում են ցաւերը, այնուհետև պէտք է ընդունել իւրաքանչիւր ժամը մի-մի տաբլէտկա, մինչև կատարեալ ապաքինումը։ Ես ինքս տառապել եմ ինֆլուէնցայով, գիշերը ընդունել եմ Կէֆալդօլ և առաւօտեան քնից վեր եմ կացել կատարեալ առողջ։

(П. 51752) (№ 2)

ԱՆԴՐԿՈՎԿԱՍԵԱՆ ԵՐԿԱԹՈՒՂԻ

(Ձմեռային երթևեկութիւն)

ժամերը նշանակված են Թիֆլիսի ժամանակով)

ԹԻՖԼԻՍԻՑ ՄԵԿՆՈՒՄ Է

ԲԱԳՈՒ.—**Արագ գնացքը** № 2—10 ժ. 12 ր. առ. հասնում է Աղստաֆա 12 ժ. 30 ր., Գանձակ 2 ժ. 55 ր., Եւլախ 4 ժ. 26 ր., Հաջի-Կաբուլ 8 ժ. եր., Բագու 11 ժ. 8 ր. գիշ.։ **Փօստատար գնացքը** № 4—12 ժ. 36 ր. գիշ., հասնում է Աղստաֆա 3 ժ. 30 ր. գիշ., Գանձակ 6 ժ. 41 ր. առ., Եւլախ 8 ժ. 38 ր. առ., Հաջի-Կաբուլ 1 ժ. 13 ր. ցեր., Բագու 5 ժ. 36 ր. ցեր.։ **Մարդատար գնացքը** № 6—6 ժ. 31 ր. եր., հասնում է Աղստաֆա 8 ժ. 51 ր. եր., Գանձակ 11 ժ. 20 ր. գիշ., Եւլախ 12 ժ. 56 ր. գիշ.։ Հաջի-Կաբուլ 4 ժ. 40 ր. գիշ., Բագու 7 ժ. 53 ր. առ.՝ **Խառն գնացքը** № 106 (Մարդատարի արագութեամբ ապրանքների համար)—5 ժ. 53 ր. գիշ., հասնում է Աղստաֆա 10 ժ. առ., Գանձակ 2 ժ. 31 ր. ցեր., Եւլախ 5 ժ. 45 ր. ցեր., Հաջի-Կաբուլ 12 ժ. 29 ր. գիշ., Բագու 6 ժ. 54 ր. առ.։

ԲԱԹՈՒՄ.—**Մարդատար գնացքը** № 11—10 ժ. 3 ր. գիշ., հասնում է Միխայլօվօ 1 ժ. 58 ր. գիշ., Բաթում 10 ժ. 21 ր. առ.։ **Փօստատար գնացքը** № 2—9 ժ. 50 ր. առ., հասնում է Միխայլօվօ 1 ժ. 55 ր. ցեր., Բաթում 11 ժ. 7 ր. գիշ.։ **Մարդատար գնացքը** № 5—4 ժամ 38 ր. ցերեկվայ հասնում է Միխայլօվօ 8 ժ. 44 ր. եր., Բաթում 5 ժ. 56 ր. գիշ. **Խառն գնացքը** № 107 (մարդատարի արագութեամբ ապրանքների համար)—4 ժ. 20 ր. գիշ., հասնում է Միխայլօվօ 10 ժ. 10 ր. առաւ., Բաթում 12 ժ. 26 ր. գիշ.։

ՋՈՒԼՖԱ-ԵՐԵՒԱՆ.—**Փօստատար գնացքը** № 4/3—1 ժ. 11 ր. գիշ., հասնում է Ղարաքիլիսա 8 ժ. 30 ր. առ., Ալէքսանդրօպօլ 12 ժ. 7 ր. ցեր., Էջմիածին 5 ժ. 22 ր. ցեր., Ուլուխանլու 5 ժ. 49 ր. ցեր. (առանց Երևան մտնելու), Նախիջևան 10 ժ. 15 ր. եր., Ջուլֆա 11 ժ. 40 ր. գիշ.։ **Մարդ.-ապրանքատար գնացքը** № 8/79 (միայն II և III կարգի վագոններով)—1 ժ. 6 ր. ցեր., հասնում է Ղարաքիլիսա 8 ժ. 23 ր. եր., Ալէքսանդրօպօլ 12 ժ. գիշ., Էջմիածին 6 ժ. 29 ր. գիշ., Ուլուխանլու 6 ժ. 11 ր. առ., Երևան 5 ժ. 51 ր. առաւ.։ **Մարդատար-ապրանքատար գնացքը** № 6/5—8 ժ. 10 ր. եր., հասնում է Ղարաքիլիսա 3 ժ. 37 ր. գիշ., Ալէքսանդրօպօլ 7 ժ. 14 ր., առ., Կարս 10 ժ. 48 ր. առ.։

ԲՈՐԺՈՄ.—**Մարդատար գնացքը** № 95/10—3 ժ. 17 ր. ցեր., հասնում է Գօրի 5 ժ. 57 ր. ցեր., Բօրժօմ 9 ժ. 13 ր. եր.։

ԹԻՖԼԻՍ Է ՀԱՍՆՈՒՄ

ԲԱԳՈՒԻՑ.—**Արագ գնացքը** № 1—9 ժ. 10 ր. եր. **Փօստատար գնացքը** № 3—9 ժ. առ.։ **Մարդատար գնացքը** № 5—3 ժ. 46 ր. ցեր.։ **Խառն գնացքը** № 107—3 ժ. 8 ր. գիշ.։

ԲԱԹՈՒՄԻՑ.—**Արագ գնացքը** № 12—8 ժ. 50 ր. առ., **Փօստատար գնացքը** № 4—11 ժ. 32 ր. գիշ.։ **Մարդատար գնացքը** № 6—5 ժ. 15 ր. ցեր.։ **Խառն գնացքը** № 106—5 ժ. 15 ր. գիշ.։

ՋՈՒԼՖԱ-ԵՐԵՒԱՆԻՑ.—**Փօստատար գնացքը** №40/3—8 ժ. առ.։ **Մարդ.-ապրանքատար գնացքը** № 6К./5—1 ժ. 28 ր. ցեր.։ **Մարդ.-ապրանքատար գնացքը** № 8Э/7—5 ժ. 28 ր. ցեր.։

ԲՈՐԺՈՄԻՑ.—**Մարդատար գնացքը** № 9/10Б—11 ժ. 22 ր. առ.։

ԲԺԻՇԿ
Ա. ՄԽԻԹԱՐԵԱՆՑ
Մասնագէտ սիֆիլիս, միզասեռական, վեներական և կաշուի հիւանդութիւնների։ Էլեկտրաբուժութիւն։
Ընդունե- (12½—2 ժ. ցերեկվայ։
լութիւնը (5—7 ժ. երեկոյեան։
ամեն օր (Կանանց համար՝ 2—3 ժ. ցեր.
Սոլոլակ, Բեբուտովսկայա, № 33 (անկիւն Պասկևիչ փողոցի) Տելեֆօն № 1175.
(չ. կ.) 377 100—84

ԿՈՎԿ. ՀԱՅՈՑ ՀՐԱՏԱՐԱԿՉԱԿԱՆ ԸՆԿ.
Լոյս տեսաւ
և ուղարկվեց բաժանորդներին
«ՀԱՆՐԱՅԻՆ ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆԻ»
№ 11—12-ը
Ա. Ս. ԳՐԻԲՈԵԴՈՎԻ
ԽԵԼՔԻՑ ՊԱՏՈՒՀԱՍ
Կոմ. 4 գործ., ոտանաւորով գիրքը, Թարգմ. Լեոն Մանուէլեանի։
Լոյս տեսան նաև «Ժողովրդական գրադարանի»
№ 1. Ստ. Տէր-Աւետիքեան.—«ՋԱՐԱԲԱՍՏԻԿ ԹՈՒՂԹԸ», գինն է 8 կ.
№ 2. Մովսէս Ղուկասեան.—«ՆԱՀԱՊԵՏԱԿԱՆ ՏՈՒՆ», գինն է 5 կ.
Դիմել Ընկ. ճիւղերին, աշխ. անդամներին, գործակալներին, Թիֆլիսի և գաւառի գրախանութներին։
Ընկերութեան հասցէն՝ Тифлисъ, Кавказское Армянское Издательское Общество, Бебутовская ул. № 25. 279. 1—1

Типографія канцеляріи Намѣстника Его Императорскаго Величества на Кавказѣ Лорис-Меликовская улица, домъ казенный